ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԱ ՏԱՐԻ, ԹԻՒ 99, ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՍՏՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ



400-ԱՄԵԱԿ

ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ ՎԱՋԵԼ...

«Մեր աչքերն ուղղենք Յիսուսին՝ մեր հաւատի հիմնադրին, այն կատարելագործողին, ով իմանալով թէ ինչ ուրախութիւն է սպասում Իրեն, արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչի վրայ մեռնելը եւ նստեց Աստծու աթոռի աջ կողմում»

(*Եբր* 12.2)

Իւրաքանչիւր Նոր Տարւայ սկզբում հարկ է, որ մտածեմ, խորհեմ ու աղօթեմ՝ խօսելու մի նիւթի մասին, որ առաջնորդի մեզ՝ որպէս հաւատացեալների, գալիք նոր տարւայ կեանքն ըստ այնմ ապրելու: Եկէ՛ք այս տարի կենտրոնանանք Յիսուսի կեանքի վրայ եւ մեր հիմնական բանալին դարձնենք վերեւում յիշւած Պօղոս առաքեալի աստուածաշնչական համարը՝ ուղղուած եբրայեցի ժողովրդին, որպէս պատգամ: Նոյն հատուածի առաջին տողն ասում է մեզ. «Մեր աչքերն ուղղենք Յիսուսին»:

Քրիստոսին հետեւողի կեանքը նման է հոգեւոր մրցավազքի: Մրցավազքի ժամանակ պէտք է ամէն խոչընդոտ, որ խանգարում է մեզ, մի կողմ դնենք, աւելի արագ վազելու համար: Այդ խոչընդոտը հիմնականօրէն մեղքն է: Իւրաքանչիւր մեղք մի կողմ պէտք է գցենք, որքան էլ այն փոքր լինի: Որովհետեւ փոքր մեղքերը կամաց-կամաց մեծանում են եւ մեզ փորձութեան մէջ են ընկղմում: Քրիստոնէական հոգեւոր մրցավազքի ժամանակ, իւրաքանչիւր վազող, երբ իր աւարտին է հասնում, նոյն մրցանակին է տիրանում՝ յաւիտենական կեանքին: Հետեւաբար, երբ Յիսուս Քրիստոսի համար վազենք՝ արա՛գ վազենք եւ մեր հայեացքը Նրան դարձնենք, այսինքն՝ մեր աչքերը Յիսուս Քրիստոսին ուղղենք: Երբէք չշեղենք մեր հայեացքը, այլապէս չենք կարող հասնել մրցավազքի աւարտին:

Յիսուս Քրիստոսն է մեր հաւատի հեղինակը՝ առաջնորդը: Նա՛ դրեց հիմքը մեր հաւատի՝ Իր Ծնունդով...: Որովհետեւ Աստուած խոստացել էր Իր ժողովրդին մի Փրկիչ ուղարկել եւ Եսայի մարգարէի միջոցով ասում է ու Իր ասածը կատարւում է. «*Ահա կոյսը պիտի յղիանայ եւ մի որդի պիտի ծնի, եւ նրան պիտի կոչեն Էմմանուէլ*» (*Մտ* 1.23), որ նշանակում է՝ Աստուած մեզ հետ:

Ամէն աւարտ ունի Նոր սկիզբ...ՆՈՐ ԾՆՈՒՆԴ:

Նա՛ դրեց հիմքը մեր հաւատի նաեւ՝ Իր մահով, Խաչելութեամբ եւ Յարութեամբ: Նա կարելի դարձրեց մեր փրկութիւնը: Հետեւաբար, Նա ոչ միայն հեղինակը, հիմնադիր առաջնորդն է մեր հաւատի, այլեւ կատարողն է, այսինքն՝ Նա հաւատի գերագոյն օրինակն է: Նա Գեթսեմանիի պարտէզում, Իր երկրաւոր կեանքի վերջին հանգրւանում կատարեալ հաւատով Ինքն Իրեն Աստծուն յանձնեց, երբ ասաց. «*Հեռացրո՛ւ ինձանից այս բաժակը, բայց ոչ թէ ինչպէս Ես եմ ուզում, այլ ինչպէս Դու ես ուզում*» (*Մր* 14.36): Ոչ ոք Քրիստոսի նման չփորձւեց եւ նման փորձութեան միջոց չանցաւ: Բոլորը լքել էին Նրան, նոյնիսկ աշակերտները հեռացել էին: Մինչեւ իսկ թւում էր, որ Աստուած էլ էր լքել Նրան, երբ Նա բարձրաձայն ասաց. «*Աստո՛ւած Իմ, Աստո՛ւած Իմ, ինչո՞ւ լքեցիր Ինձ*» (*Մր* 15.34): Այսուհանդերձ, Յիսուսն իմանալով, որ ինչ ուրախութիւն է սպասում Իրեն, յանձն առաւ խաչի մահը, ամօթն արհամարհելով: Որովհետեւ խաչը մահւան անարգ գործիք էր. յանցագործներն էին, որ խաչւում էին եւ դատապարտւում խաչելութեան: Խաչը խորհրդանիշն էր ցաւի, ամօթի եւ մերժումի: Ամենախիստ դատապարտեալ չարագործներին էր վերապահւած խաչելութիւնը: Հետեւաբար ո՞ւր էր ուրախութիւնը նման ձեւի մահւան: Պատասխանը յստակ է բնականօրէն. ո՛չ մէկ ուրախութիւն խաչելութեամբ մահւան մէջ: Սակայն Քրիստոս գնաց մահւան գիրկը, յանձն առաւ խաչի մահը, ամօթը, որպէսզի գերագոյն հաւատի օրինակը տայ մեզ, որ ամէն ինչից վեր է: Մէկ խօսքով՝ Նա մեր հաւատի կատարողն եղաւ, որին պէտք է հետեւենք: Նա կատարելագործւեց Իր կրած տառապանքի միջոցով. «*Որովհետեւ Աստուած, որ Իր համար ստեղծեց եւ Իրենով է պահում ամէն ինչ՝ Իր փառքին մասնակից դարձնելու համար Իր բազում որդիներին, յարմար գտաւ, որ նրանց փրկութեան առաջնորդող Յիսուսն Ինքը օրինակ տայ՝ չարչարանքների միջոցով կատարելու-*

թեան հասնելու» (*Եբր* 2.10)։

Հետեւաբար, հաստատակամ մնանք մեր հաւատի մէջ, որպէսզի Քրիստոսին միանանք, Քրիստոսի հետ բարձրանանք. «*Որովհետեւ, մենք այսուհետեւ մաս ենք կազմում Քրիստոսին, եթէ մինչեւ վերջ անխախտ պահենք սկզբից մեր ձեռք բերած վստահութիւնը*» (*Եբր* 3.14)։

Մի խօսքով՝ ուրախակից կը դառնանք Քրիստոսին, Նրա հետ թագաւորելու երկնքում: Այո՛, Նա ո՛չ միայն մեր հաւատի հիմնադիրն ու առաջնորդն է, այլ՝ կատարելագործողը, կատարելութեան հասցնողը:

Նա նստեց Աստծու աջ կողմը, տիեզերքի ամենապատուական տեղը: Սրանից աւելի բարձր տեղ եւ դիրք չկայ: Հետեւաբար, Քրիստոսին միանանք, Քրիստոսի հետ բարեկամանանք. Մէկը, որ Իր բարձրունքից պատրաստ է մեզ օգնելու եւ Իր շնորհքները բաժանելու մեզ, երբ կարիքն ունենք:

Ինչ որ կամենանք կարող ենք գտնել Քրիստոսի մէջ: Նա ունի ամբողջական յոյսը, սէրը, շնորհը, ուժը, զօրութիւնը, իմաստութիւնը, համբերութիւնը, առաջնորդութիւնը, ուրախութիւնը, տոկունութիւնը, ներողամտութիւնը, որոշումը, համարձակութիւնը եւ հեզութիւնը, այն ինչին, որին մենք կարիքն ունենք: Ամէն առաքինութիւն Նրա մէջ կը գտնենք: Ամէն լաւ բան որի կարիքն ունենք, Յիսուսն ունի Իր մէջ:

Նա է մեր Փրկիչը, առաջնորդը մեր փրկութեան:

«Եկէք մեր աչքերը ուղղենք Յիսուսին»,

Որովհետեւ Նրա մէջ ուժ կայ, հետեւաբար՝ զօրանա՛նք Նրանով:

Նրա մէջ ճշմարտութիւն կայ, հետեւաբար՝ սովորե՛նք Իրենից եւ նայե՛նք Նրան:

Նրա մէջ շնորհ կայ, հետեւաբար՝ ստանա՛նք Իրենից:

Նրա մէջ անսահման հարստութիւն կայ, հետեւաբար՝ թօթափե՛նք աղքատութիւնը:

Նրա մէջ զօրութիւն կայ, հետեւաբար՝ տկա՛ր լինենք Իր նկատմամբ:

2014 տարին է բացւում մեր առաջ. նոր հորիզոններ, նոր յոյսեր, նոր մարտահրաւէրներ...

Մտաբերենք, որ ամէն օր մի նոր պատերազմի մէջ ենք ներքաշւելու, ամէն օր նոր մրցավազքի մէջ ենք լինելու: Սակայն, եթէ մեր հայեացքը սեւեռենք Յիսուս Քրիստոսին, չենք յուսահատւելու, չենք յոգնելու մեր վազքի մէջ, որովհետեւ այդ վազքը մեզ հասցնելու է դէպի Խաչ՝ վերջնագծին, որից յետոյ նստելու ենք Յիսուս Քրիստոսի կողքին՝ երկնքում, Դրախտում, ու մեր գործն աւարտին է հասնելու եւ շահելու ենք վերջնական յաղթանակը:

«Եկէք մեր աչքերը Յիսուսին ուղղենք» 2013 թւականի մայրամուտի եւ 2014 թւականի արշալոյսին: Եւ վստահ լինենք որ, Նա է մեր հաւատի Առաջնորդը, Նրանով միայն կարող ենք ժառանգել յաւիտենական կեանքը եւ Նրանով միայն կարող ենք բարձրանալ եւ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԻԵԼ...:

Տօնական այս օրերին մեր պարտքն է մտածելու մեր հարազատների ու բարեկամների մասին, մտածելու նաեւ տկարի, հիւանդի, կարօտեալի մասին, օգնելու նրանց եւ աղօթել նրանց համար, որպէսզի Աստուած նրանց քաջառողջ կեանք եւ հոգեկան խաղաղութիւն ու անդորրութիւն պարգեւի:

Նման հանգրւանում, հարկ է որ յիշենք նաեւ մեր ազգի բոլոր ննջեցեալներին եւ աղօթել նրանց հոգիների խաղաղութեան համար. նրանց՝ ովքեր անցեալ տարի մեզ հետ էին ու այսօր չկան: Դրանով մենք առաւել կը զօրանանք:

Մեծի Տանն Կիլիկիոյ հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը 2014 տարին յայտարարել է «Հայ Տարեցների Տարի»: Արդարեւ մի նոր աշխատանքի տարի է բացւել մեր բոլորի առաջ՝ յարգելու, պատւելու եւ յատուկ սէր տածելու տարեցներին:

Այս տարի նաեւ ս. Ամենափրկչեան Վանքի ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցու շինութեան 350-ամեակն է: Արժանավայել ձեւով եւ մեծ հանդիսութեամբ ենք տօնելու մեր Վանքի եկեղեցու 350-ամեակը:

Թող Ամանորը հայ ժողովրդի համար բացի մի նոր ճանապարհ, առաւել յոյսով ու հաւատով քայլելու եւ բոլորելու նորանոր նւաճումներով արդիւնաշատ մի տարի:

Ջերմապէս մաղթում ենք, որ Տէրը ձեզ պարգեւի քաջառողջ կեանք ու արեւշատ օրեր:

ÞÝáñÑ³õáñ Ùáñ î³ñÇ

1 յունուար, 2014
Նոր Ջուղա

Բաբգէն Եպս. Ֆարեան
Առաջնորդ
Սպահանի Հայոց Թեմի

ԱՒՍՏՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ ԵՒ ԴԵՍՊԱՆԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

2013 թւականի նոյեմբերի 4-ի կէսօրից յետոյ ժամը 5:00-ին, Սպահանի Նահանգապետարանի Արարողակարգային բաժնի պատասխանատուի ուղեկցութեամբ ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Աւստրիայի Արտաքին Գործոց Նախարարի տեղակալ պրն. Ռայնհոլդ Լուփթկան եւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնում Աւստրիայի լիազօր դեսպան պրն. Ֆրեդրիխ Ըշթիֆտը: Պատուիրակութիւնը նախ այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի, ապա «Խաչատուր Կեսարացի» անւան թանգարան, որից յետոյ Ծաղկեայ դահլիճում հանդիպում ունեցաւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի հետ: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր պրնք. Նոէլ Մինասեանը եւ Արշալոյս Խուդավերդեանը:

Հանդիպման սկզբում առաջնորդ Սրբազան Հայրը ուրախութիւն յայտնեց պատուիրակութեան անդամների այցելութեան առթիւ եւ առ ի ծանօթացում հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի ընդհանուր կացութեան եւ թեմում աշխատող եկեղեցիների, ազգային, մշակութային եւ մարզական կառոյցների մասին: Պրն. Լուփթկանի հարցումներին պատասխանելով, թեմակալ առաջնորդը լուսաբանութիւններ տուեց Իրանում ապրող հայ համայնքի իրաւունքների եւ քաղաքացիական պարտաւորութիւնների ու պարտականութիւնների, կրօնական եւ ազգային ծիսակատարութիւնների անկախութեան եւ ազատութեան, նաեւ հայեցի կրթութեան ու քրիստոնէական դաստիարակութեան հնարաւորութիւնների կապակցութեամբ:

Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն իր երախտագիտութեան խօսքն ուղղեց՝ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ 1987 թւականին Եւրոխորհրդի կողմից ընդունուած բանաձեւի վաւերացման գործում Աւստրիայի կառավարութեան դրսեւորած դրական մօտեցման համար:

Աւստրիայի Արտաքին Գործոց Նախարարի տեղակալը բազմաթիւ հարցերով հետաքրքրուեց Իրանում ապրող քրիստոնեայ զանազան համայնքների ներքին յարաբերութեան եւ համագործակցութեան կապակցութեամբ: Թեմակալ առաջնորդը նշելով, որ այդ ուղղութեամբ բոլոր աշխատանքները կատարւում են առանց արգելքների եւ դժուարութեան, շեշտեց, որ նոյնիսկ գոյութիւն ունեն քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան համաժողովներ թէ Սպահանի եւ թէ միջազգային մակարդակների վրայ, որի ջատագովն ու ռահւիրան է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետը: Սրբազան Հայրը յիշեց նաեւ, որ Արամ Ա Վեհափառ Հայրապետը 18 տարի վարել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ատենապետութիւնը՝ ցուցաբերելով գործօն եւ նախանձախնդիր կեցուածք:

Առաջնորդ Սրբազան Հօր խօսքերից յետոյ, արտայայտուեց Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը: Նա իր գոհունակութիւնը յայտնեց Իրանի Իսլ. Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան մէջ առաջացած բարենպաստ փոփոխութիւնների արդիւնքում արտաքին յարաբերութիւններում նկատւող դրական զարգացումների կապակցութեամբ եւ կարեւորութեամբ ընդգծեց պատուիրակութեան առաքելութիւնը՝ երկու երկրների միջեւ փոխ-յարաբերութիւններն առաւել ամրապնդելու եւ ընդլայնելու ուղղութեամբ: Պրն. Մինասեանը պատասխանելով պրն. Լուփթկանի հարցումներին՝ հայ համայնքի կենցաղային եւ ապահովական իրավիճակի վերաբերեալ, շեշտեց, որ Իրանի կեցուածքը փոքրամասնութիւնների նկատմամբ միշտ եղել է դրական եւ զանազան միջոցներով օժանդակութիւններ են ցուցաբերուել նրանց. որպէս օրինակ, պրն. Մինասեանն ասաց. «*Մինչ Իրանի հիւսիս-արեւմտեան սահմանին կից Ադրբեջանի հանրապետութիւնը հին Ջուղայում ամենայն լկտիութեամբ կործանում էր հայութեանը պատկանող խաչքարերն ու պատմամշակութային յուշարձանները, այս կողմ՝ իրանական սահմանի մէջ պետական հաստատութիւնների միջոցներով պահպանւում եւ նորոգւում են մեր պատմական վանքերը, եկեղեցիներն ու կոթողները*»:

Այս բոլոր պարզաբանումները կատարելուց յետոյ, պրն. Մինասեանը դիմելով պատուիրակութեան անդամներին՝ յոյս յայտնեց, որ նրանք եւրոպական կառոյցներին ճշգրիտ տեղեկութիւններ փոխանցելով՝ հարազատ թարգմանն են հանդիսանալու Իրանում տիրող մթնոլորտի արտացոլման ուղղութեամբ, որով արեւմտեան երկրներում Իրանի Իսլ. Հանրապետութեան դէմ ձեւաւորուած անիրական եւ սխալ մտայնութիւններն ու գաղափարները կը սրբագրուեն եւ կը վերացուեն թիւրիմացութիւնները նրանց մօտ:

Հիւրերն իրենց հիացմունքը յայտնեցին ս. Ամենափրկչեան պատմական Վանքի հրաշակերտ կառոյցի վերաբերեալ: Այնուհետեւ լուսանկարուելուց յետոյ, հրաժեշտ տուեցին առաջնորդ Սրբազան Հօրն ու պատասխանատու անձանց:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Երեքշաբթի՝ 2013 թւականի նոյեմբերի 12-ի առաւօտեան, Սպահանի Հայոց Թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի գլխաւորութեամբ Ազգային Առաջնորդարանի կողմից մի պատուիրակութիւն այցելեց Սպահան նահանգի նորանշանակ նահանգապետ պրն. Ռասուլ Զառգառ-Փուռին: Պատուիրակութեանը մաս էին կազմում Պատգամաւորական Ժողովի Դիւանի ատենապետ պրն. Վարուժ Մինասեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր պրնչք. Նոէլ Մինասեանն ու Արշալոյս Խուդավերդեանը, եւ նոյն խորհուրդների անդամներ պրնչք. Մասիս Հայրապետեանը եւ Գարեգին Մարկոսեանը:

Պատուիրակութիւնը պրն. Զարգառ-Փուռին հանդիպելուց առաջ, Նահանգապետարանի արարողակարգային բաժնի պատասխանատուի ուղեկցութեամբ այցելեց նահանգապետարանի շրջափակում մասնագիտական նորոգութեան յանձնուած եւ հնութիւն համարուող մի շինութիւն, որն օգտագործելու է իբրեւ պաշտօնական ընդունարան եւ արուեստի թանգարան: Ընդհանուր բացատրութիւններ տրուեց աշխատանքի ընթացքի եւ նպատակների մասին:

Պատուիրակութիւնը ջերմ ընդունելութիւն գտաւ նահանգապետի կողմից, ով սկզբում իր ողջոյնի եւ շնորհակալութեան խօսքն ասաց այցելութեան առթիւ: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացնելով պատուիրակութեան անդամներին, նրանց եւ Ազգային Առաջնորդարանի անունից շնորհաւորեց պրն. Զառգառ-Փուռին՝ նահանգապետ նշանակուելու առթիւ: Նա վստահեցրեց, որ Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդարանը՝ իր ամբողջ ենթամարմիններով, ինչպէս նախորդ նահանգապետի, այնպէս էլ իր նկատմամբ բարեացակամ է եւ ամենիմաստ համագործակցութեան ոգով լցուած: Գերշ. Սրբազան Հայրը շեշտեց, որ հայ համայնքի եւ տեղացիների աւելի քան 400 տարի անցեալ եւ արմատ ունեցող խաղաղ համագոյակցութիւնը դեռ երկար է շարունակուելու իմաստուն պատասխանատուների ճիշտ մօտեցումների եւ որոշումների շնորհիւ: Թեմական առաջնորդը նաեւ նահանգի եւ երկրի ամբողջ պատասխանատուներին ցաւակցութիւն յայտնեց Մոհառամ ամսւայ սգոյ օրերի կապակցութեամբ:

Պրն. Զառգառ-Փուռն իր անցեալի վարած պաշտօնների բերումով ծանօթ լինելով հայ ժողովրդին, մտերիմ եւ հաճելի զրոյցի ընթացքում իր անձնական յուշերից դրուագներ մէջբերելով՝ գնահատանքի եւ դրուատանքի խօսքեր ուղղեց հայ համայնքին: Պրն. նահանգապետն ընդհանուր գծերով ներկայացրեց նահանգապետարանի յառաջիկայ չորս տարիների ծրագրերը եւ վստահեցրեց, որ այդ ուղղութեամբ լուրջ են վերաբերուելու Առաջնորդարանի կողմից տրուող առաջարկներին ու կարծիքներին, որոնք նպաստելու են Սպահան քաղաքի եւ նահանգի բարօրութեանն ու դժուարութիւնները փարատելու բազմածաւալ աշխատանքներին:

Պրն. Զառգառ-Փուռը շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօրը եւ Ազգային Առաջնորդարանի պատասխանատուներին, ովքեր երկրում կամ արտերկրում ունեցած պաշտօնական հանդիպումների ընթացքում ճիշտ եւ հարազատ կերպով են ներկայացնում Իրանում տիրող կարգավիճակը:

Նահանգապետի հետ զրոյցի ընթացքում, Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանն եւս իր հերթին շնորհաւորեց նրան եւ յոյս յայտնեց, որ երկրում ստեղծուած հանդուրժողականութեան նոր քաղաքականութեան շնորհիւ առաջացած առաւել նպաստաւոր պայմաններում երկուստեք յարաբերութիւններն ու համագործակցութիւններն աւելի են զարգանալու եւ արդիւնաւէտ են դառնալու: Պրն. Մինասեանն անդրադարձաւ Երեւան-Սպահան քոյր քաղաքների միջեւ յարաբերութիւնների զարգացմանն ու գրեթէ դադարած աշխատանքների վերսկսման անհրաժեշտութեանը, շեշտելով որ Ազգային Առաջնորդարանը կարող է եւ պատրաստ է այս ուղղութեամբ միաւորող օղակ հանդիսանալ:

Մի շարք գործնական այլ հարցերի շուրջ մտքերի փոխանակումից յետոյ պատուիրակութիւնը հրաժեշտ տուեց պրն. Զառգառ-Փուռին:

5-ՐԴ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ

Երեքշաբթի՝ 2013 թւականի դեկտեմբերի 17-ի կէսօրից յետոյ ժամը 2:00-ին, Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ասառզադեգանը, քաղաքապետարանի մի քանի պաշտօնեաների ընկերակցութեամբ, այցելեց Նոր Ջուղայի Հայոց Ազգային Ծերանոց: Հանդիպմանը ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական Խորհրդի եւ Կալւածա-Տնտեսական Մարմնի ատենապետերն ու անդամները, եւ Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութեան Վարչութեան կազմը:

Ծերանոցի նախասրահում, նախքան տարեցներին հանդիպելը, Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեց Ազգային Ծերանոցի կառուցման եւ անցեալի ու ներկայի աշխատանքների ու կառավարման մասին: Ապա քաղաքապետը ծաղիկներով եւ նուէրներով այցելեց ծերանոցում բնակւող տարեցներին եւ իր ողջոյնի խօսքը փոխանցեց նրանց՝ առողջութիւն եւ երկար կեանք մաղթելով:

Հայ Կանանց Գթութեան Միութեան Վարչութեան նախագահուհի տկն. Արմինէ Սիմոնեանը բարի գալուստ մաղթելով քաղաքապետին եւ ընկերակցող պատուիրակութեան անդամներին՝ համապարփակ կերպով ներկայացրեց Միութեան հիմնադրութեան, գործունէութեան եւ մատուցած ծառայութիւնների մասին հակիրճ բացատրական, որտեղ նշւած էր, որ Հայ Կանանց Գթութեան Միութիւնը հիմնադրութեան օրերից սկսեալ հաւատարիմ մնալով բարեգործական սկզբունքին՝ յանձն առնելով բազմաթիւ դժւարութիւններ եւ մեծ ճիգով վերացնելով զանազան խոչընդոտներ, փորձել է լաւագոյն կերպով օգտակար հանդիսանալ կարիքաւորներին ու զրկեալներին, միաժամանակ իր գործօն մասնակցութիւնն ունենալով համահայկական բնոյթ կրող բարեսիրական աշխատանքներում:

Պրն. Նոէլ Մինասեանը, յաւելեալ բացատրութիւն ներկայացնելով, շեշտեց, որ Հայ Կանանց Գթութեան Միութեան բոլոր անդամները սիրայօժար եւ ձրիաբար գործակցում են Միութեան աշխատանքներին եւ իրենց թանկագին ժամանակը առանց խնայողութեամբ յատկացնում են բարեսիրական նպատակով կամակերպւած, յատկապէս Ազգային Ծերանոցին առնչւող, աշխատանքներին: Նրանք գնահատելի մակարդակի վրայ են պահում ծերանոցի առողջապահական եւ կենցաղային խնդիրները, որի պատճառով պետական մարմինների կողմից բազմիցս արժանացել են լաւագոյն կոչումների եւ խրախոյսների:

Տարիքաւորների անունից, Ծերանոցի ընդհանուր պատասխանատու Սեւանա Ղարախանեանը շնորհակալական խօսք փոխանցեց պրն. Ասառզադեգանին եւ հիւրերին, միաժամանակ 2014 տարւայ ամանորի առթիւ շնորհաւորելով բոլորին՝ նրանց գործունէութեանը յաջողութիւն եւ վերելք մաղթելով:

Հանդիպման աւարտին Հայ Կանանց Գթութեան Միութեան կողմից պատրաստւած ամանորեայ մրգեր յանձնւեցին հիւրերին, ովքեր կրկին անգամ տարեցներին արւեշատութիւն մաղթելով հրաժեշտ տւեցին նրանց:

ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

2013 թւականի դեկտեմբերի 3-ի երեկոյեան, Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի նախաձեռնութեամբ, Նոր Ջուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ միջոցառում՝ Հայ Դատի քարոզչական աշխատանքների ծիրի մէջ:

Ծրագրին, որը վարում էր Ադրինէ Ղեւեանը, ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անդամները, քահանայից դասի, ազգային մարմինների, միութիւնների ու հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներն ու գիտակից հայորդիներ:

Ծրագրում Հայաստանից ժամանած «Հայ Դատն այսօր» 10-րդ խորհրդաժողովի զեկուցաբերներ «Համազգային» Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կենտրոնական Վարչութեան անդամ Մասիս Բաղդասարեանը բանախօսական ելոյթ ունեցաւ «Հայ Դատ, պահանջատիրութիւն ու մշակոյթ» նիւթի շուրջ, իսկ քաղաքական վերլուծաբան ու լրագրող Էդիկ Անդրիասեանը ներկայացաւ «Հայ Դատ, պահանջատիրութիւն ու Հայաստանի զանգւածային լրատւամիջոցները» թեմայով:

Բանախօսութիւններին յաջորդեց Արցախեան պատերազմի թեմայով, 2013 թւականի «Ոսկէ ծիրան» կինոփառատօնի մրցանակակիր «Ընդհատւած մանկութիւն» (ռեժիսոր՝ Ջիւան Աւետիսեան) գեղարւեստական ֆիլմի ցուցադրումը:

Երեկոն եզրափակւեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի պատգամով. Սրբազան Հայրը յորդորեց՝ Հայաստանի իշխանութիւնը եւ Սփիւռքը միակամ կեցւածքով ճշտեն Հայ Դատի առնչութեամբ իրենց ռազմավարութիւնը՝ հայ ժողովրդի անժամանցելի իրաւունքների արդար լուծման նպատակով:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՍՏՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ 400-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Նոր Ջուղայի ս. Աստուածածին եկեղեցին կառուցուել է 1613 թուականին Նոր Ջուղայի «Մեծ Մէյդան» կոչուած թաղամասում: Եկեղեցին կառուցուել է կամարակապ: Առաստաղի վրայ կան հին եկեղեցիների պատկերների նման նկարներ: Պատին կան քանի պատկերներ, որոնք նկարուել են աւելի ուշ եւ կատարելագործուել են աւելի բարձր արուեստով քան առաստաղի նկարները: Հիւսիսային եւ հարաւային պատերի վրայ կան երկու պատկերներ, որոնք հմուտ պատկերահանի գործ են եւ պատրաստուել են կտաւի վրայ՝ Վենետիկում: Եկեղեցու կառուցողի՝ Խոջա Աւետիքի դին ամփոփուել է եկեղեցու արեւմտեան կողմում:

Եկեղեցու հիւսիսային կողմում կայ մի փոքրիկ մատուռ՝ ս. Յակոբ կոչուած, որ կառուցուել է եկեղեցուց առաջ:

***

Հինգշաբթի՝ նոյեմբերի 21-ի երեկոյեան, ս. Աստուածածնի տաճար ընծայման տօնի օրը, Նոր Ջուղայի ս. Աստուածածին եկեղեցու 400-ամեակի եւ «Հայ Մօր Տարւայ» առթիւ, ձեռամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց նոյն եկեղեցում: Այդ օրը նշում էր նաեւ ս. Աստուածածին եկեղեցու անուանակոչութեան տօնը: Ս. Պատարագին ներկայ էին հոգեւորականաց դասը, ազգային մարմինների ներկայացուցիչները եւ մեծ թիւով ժողովուրդ: Արարողութեան ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Ցընթացս ս. Պատարագի, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով ընթերցուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ ս. Աստուածածին եկեղեցու 400-ամեակի առթիւ, որտեղ շնորհազարդ Հայրապետն անդրադառնալով նշուած եկեղեցու մեծ դերակատարութեանը՝ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային կեանքում եւ յիշելով ծառայած հոգեւոր ու աշխարհական մշակներին, կարեւորութեամբ շեշտել էր. «*Անցեալը յիշել կը նշանակէ նաեւ անցեալին ձեռք ձգուած իրագործումներն առաւել հաւատքով շարունակել՝ հաւատարիմ մնալով հայ եկեղեցւոյ սրբազան կոչումին: Արդարեւ Նոր Ջուղան իր եկեղեցիներով ու մշակութային նուաճումներով, յատուկ տեղ է գրաւած մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Ան կոչուած է վերանորոգ յանձնառութեամբ շարունակելու իր հոգեմտաւոր առաքելութիւնը՝ ընդհանրապէս հայ ժողովուրդի եւ յատկապէս Պարսկաստանի հայութեան կեանքէն ներս*»:

Այնուհետեւ պատարագիչ Սրբազան Հայրն իր օրհնանքը փոխանցեց ներկաներին: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, որպէս բնաբան արտասանելով Պետրոս առաքեալի առաջին նամակից՝ «Եթէ մի անգամ տիրոջ խօսքի համն առնէք, պիտի տեսնէք, որ քաղցր է նա» հատուածը, այսպէս շարունակեց. «*Առաքեալն ասում է նաեւ՝ Քրիստոսին հետեւեցէք, քանի որ Նա այն քարն է, այն վիմաքարն է, որի վրայ հիմնուեց հոգեւոր եկեղեցին: Դուք եւս՝ որպէս մէկական քարեր, այդ վիմաքարի վրայ բարձրացէք եւ միասնաբար կառուցէք աննիւթական տաճարը՝ հոգեւոր եկեղեցին: Որովհետեւ հոգեւոր եկեղեցին մենք ենք, ժողովուրդն է, մեր հաւաքականութիւնը, միասնականութիւնն ու միասնական հաւատն է*»:

Քարոզի շարունակութեան մէջ գերշ. Սրբազան Հայրը ս. Աստուածածին եկեղեցու 400-ամեակի տօնը հպարտանալու առիթ համարելով՝ ասաց. «*Ահաւասիկ այս Թեմի գաւակները հպարտանալու առիթ ունեն, որ նման գաղութի*

Շարունակութիւնը՝ 11-րդ էջում

ê.Ú²Îà´ØÌ´Ü²ÚÐ²Úð²ä°îÆîúÜÀ Üàðæàôô²ÚÆÐ²Ø²ÜàôÜ°Î°Ô°òàôØ

Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի Տօնի առիթով, շաբաթ՝ 2013 թւականի դեկտեմբերի 14-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Նոր Ջուղայի ս. Յակոբ եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, տեղի ունեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագիչ քահանան էր արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը: Արարողութեանը ներկայ էին հոգեւորականաց դասը եւ հաւատացեալ ժողովուրդ: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարում էր «Շուշանիկ» Երգչախումբը:

Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետը հայ ժողովրդի համար սիրելի եւ մեծ յարգանքի արժանի սուրբ է համարւում՝ իր անւան հետ կապւած զրոյցներով եւ աւանդութիւններով հանդերձ: Նոյն այս ոգով ներկայ հաւատացեալներին իր հայրական պատգամն ու քարոզը փոխանցեց թեմական առաջնորդ Սրբազան Հայրը՝ անդրադառնալով սուրբի բարեկեցիկ կեանքին, գործունէութեան եւ զօրաւոր հաւատին, որը աստուածահաճոյ գեղեցիկ կեանքի լաւագոյն օրինակներից կարող է համարւել իւրաքանչիւր քրիստոնեայի համար:

Ս. Պատարագի ընթացքում ներկաներն ստացան ս. Հաղորդութիւնը, իսկ արարողութեան վերջաւորութեանը ս. Յակոբի աջ-մասունքով կատարւեց Զրօրհնէքի արարողութիւն: Ներկայ հաւատացեալները սուրբի հրաշագործ զօրութիւններին հաղորդ դարձած, երկիւղածութեամբ բաժին ստացան օրհնւած ջրից՝ վստահ լինելով, որ այն փարատելու է իրենց եւ իրենց ընտանիքի անդամների ցաւերն ու հիւանդութիւնները:

Նշենք, որ ս. Յակոբ եկեղեցին, որը գտնւում է ս. Աստուածածին եկեղեցու շրջափակի հիւսիս-արեւմտեան անկիւնում, համարւում է Նոր Ջուղայի ամենափոքր եւ առաջին եկեղեցին:

ê.ØÆÜ²êÆ°ôÜàðæàôô²ÚàôØÐ²Ø²ÜàôÜ°Î°Ô°òàô²Üô²Ü²ÎàâàôÂ°²Ü îúÜ

Երեքշաբթի՝ դեկտեմբերի 3-ին, ս. Մինասի տօնի առթիւ, Նոր Ջուղայի ս. Մինաս եկեղեցում, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը նախագահութեամբ, տեղի ունեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագիչն էր եկեղեցու հովիւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը: Երգեցողութիւնը կատարում էր ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը, եւ ներկայ էր հոգեւորականաց դասը:

Առաջնորդ Սրբազան Հայրը յընթացս ս. Պատարագի իր պատգամն ուղղեց ժողովրդին: Նա խօսեց սուրբ Մինասի կեանքի ու մարտիրոսութեան մասին, եւ նրա կեանքի ընդմիջից անդրադարձաւ հաւատի վկայութեան կարեւորութեանը: Նա գնահատեց բոլոր նրանց՝ ովքեր ծառայում են եկեղեցու պայծառացման եւ բարեզարդման համար:

Պատարագի աւարտին կատարւեց Զրօրհնէքի արարողութիւն, որից յետոյ եկեղեցու սրահում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ գեղարւեստական յայտագիր:

Ս. ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՏՕՆԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

1841 թւականին, Նոր Ջուղայի Մեծ-Մէյդան թաղի ս. Աստուածածին եկեղեցու գաւթում հիմքը դրուեց «Հայկեան Հայրենասիրական» դպրոցի, որը հաստատուեց 1843 թւականին: Դրա հիմնադիրը եւ բարերար-հովանաւորողը եղաւ մեծահամբաւ «Աբգարեանց» հաստատութիւնը: Նոր Ջուղայում կրթութեան ասպարէզում Աբգարեան տոհմի կատարած այս արժէքաւոր ներդրման համար, նրանց յիշատակին ամէն տարի ս. Աբգար թագաւորի տօնին, վերոյիշեալ եկեղեցում մատուցւում է սուրբ եւ անմահ պատարագ, որին մասնակցում են Նոր Ջուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի աշակերտները՝ դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի ընկերակցութեամբ:

Այս տարի եւս, շաբաթ, դեկտեմբերի 21-ի առաւօտեան, մատուցող ս. Պատարագին, որին նախագահում էր Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Զարեանը, նոյնպէս ներկայացան սաները եւ հաւատացեալ ժողովուրդ: Օրւայ պատարագիչն էր Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը, ներկայ էին նաեւ քահանայ հայրերն ու դպրաց դասը, իսկ ս. Պատարագի երգեցողութիւնը կատարում էին ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախմբի անդամուհիներից:

Քարոզի պահին, առաջնորդ Սրբազան Հայրը բնաբան ունենալով «Միայն մի բան ասա, եւ իմ ծառան կը բժշկւի» աւետարանական հատուածը, եւ անդրադառնալով Քրիստոսի հրաշագործ զօրութեան եւ Իր առաքեալներից մէկին հայոց թագաւոր ս. Աբգարի մօտ ուղարկելու դրւագի մասին, խօսեց քրիստոնեայ կեանքում ամուր հաւատ ունենալու անհրաժեշտութեան վերաբերեալ, ապա գնատահեց մանկապարտէզ-նախակրթարանի պատասխանատուներին՝ աշակերտներին եկեղեցի բերելու ամենամեայ աւանդութիւնը յարգելու կապակցութեամբ, եւ իր խօսքն ուղղելով ներկայ սաներին, ողջունեց նրանց ներկայութիւնը եկեղեցում եւ ասաց. «*Գեղեցիկ երեւոյթ է, որ մանկապարտէզ-նախակրթարանի սաներդ ս. Աբգար թագաւորի տօնին ներկայանում էք եկեղեցի եւ երախտագիտութեամբ յիշում ու շնորհակալութիւն էք յայտնում Աբգարեան տոհմին, որոնց միջոցով նոյն այս եկեղեցու շրջափակում դպրոց է հիմնւել՝ ձեզ նման աշակերտներին կրթելու, ուսուցանելու եւ հայօրէն դաստիարակելու նպատակով: Ես մաղթում եմ, որ ինչպէս Աւետարանում նշւած հարիւրապետը եւ հայոց աւանդութեան մէջ յայտնի Աբգար թագաւորը խորը հաւատով վստահեցին Յիսուսին, դուք եւս նոյն ամուր հաւատով մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մշտական բարեկամները եւ նրան վստահողները լինէք*»:

Արարողութեան ընթացքում մանկապարտէզ-նախակրթարանի բոլոր սաներն ու ներկայ ժողովուրդը հաղորդութիւն ստացան:

Ս. Պատարագից յետոյ, եկեղեցու բակում, Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան կողմից գեղե-

Շարունակութիւնը՝ 11-րդ էջում

ՏՕՆ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Քրիստոնէական առաջին դարում, առաքելական շրջանում, երբ Քրիստոսի աշակերտներն սկսեցին քարոզչական աշխատանքը, իբրեւ օգնականներ, նորադարձ ժողովրդի միջից ընտրեցին եւ ձեռնադրեցին եօթը անձանց, ովքեր կոչեցին սարկաւագներ եւ ստանձնեցին հաւատացեալների մատակարարման աշխատանքը: Նրանցից ամենայայտնի եւ աչքի ընկնողն էր ս. Ստեփանոսը, ով արիաբար եւ անվարան քրիստոնէութիւնը քարոզելու պատճառով քարկոծմամբ նահատակւեց հրեաների միջոցով եւ այդպիսով դարձաւ քրիստոնեայ առաջին մարտիրոսը: Ս. Ստեփանոս Նախավկայի յիշատակի տօնը կոչւում է նաեւ սարկաւագաց տօն, որը Նոր Ջուղայի ս. Ստեփանոս եկեղեցու անւանակոչութեան տօնն է միաժամանակ:

Երեքշաբթի՝ դեկտեմբերի 24-ին, ս. Ստեփանոսի տօնի օրը, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցւեց Նոր Ջուղայի ս. Ստեփանոս եկեղեցում: Արարողութեանը նախագահում էր Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը: Պատարագիչն էր եկեղեցու հովիւ արժն. Տ. Մեսրոպ Աւ. քհնյ. Գալստանեանը, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարում էր ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Ներկայ էին Նոր Ջուղայի եւ Շահինշահրի եկեղեցիների սարկաւագները, ովքեր արարողութեան ժամանակ, քարոզի պահին, հոգեւոր հայրերի հետ միասին, եկեղեցու բեմ բարձրացան եւ իրենց ձեռքերում լուսաւորւած մոմեր բռնած՝ կանգնեցին ս. Սեղանի առջեւ եւ միասնաբար երգեցին «Ստեփանոս՝ քաղցրիկ տատրակ» շարականը: Արարողութեանը ներկայ էին նաեւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի, Ն.Ջ. Հայոց Եկեղեցեաց Վարչութեան անդամներն եւ հաւատացեալ ժողովուրդ:

Յաւուր պատշաճի քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը: Նա անդրադառնալով ս. Ստեփանոս Նախավկայի անձի եւ գործունէութեան մասին, շեշտեց, որ եկեղեցուն եւ եկեղեցու ճամբով հաւատացեալներին ծառայելն ենթադրում է ամուր հաւատ եւ վստահութիւն Քրիստոսի եւ Աստծու հանդէպ, ինչը վառ յատկանիշն էր ս. Ստեփանոսի, ով նոյնիսկ չվարանեց մահը յանձն առնել՝ իմանալով, որ աւելի մեծ ուրախութիւն է սպասում իրեն: Գերշ. Սրբազան Հայրը յորդորեց սարկաւագներին՝ իրենց կեանքը լիարժէք կերպով ընծայեն ճշմարտութեան քարոզութեանն ու հաւատի պաշտպանութեանը:

Ս. Պատարագի աւարտին բեմ բարձրացաւ հոգեւորականաց դասը եւ առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, ս. Ստեփանոսի աջ-մասունքով կատարւեց Զրօրհնէքի արարողութիւն եւ ջուրը բաժանւեց ներկայ հաւատացեալներին:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, ս. Ստեփանոս եկեղեցու սրահում, եկեղեցու բարեգործման կանանց յանձնախումբը եւ Նոր Ջուղայի Եկեղեցեաց Վարչութիւնը կազմակերպել էին հիւրասիրութիւն: Ընթացքում հերթաբար արտայայտւեցին եւ շնորհաւորանքի ու գնահատանքի խօսքեր արտասանեցին Եկեղեցեաց Վարչութեան

ատենապետ պրն. Ղուկաս Ծատուրեանը, Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանը եւ եկեղեցու հովիւ արժն. Տ. Մեսրոպ Աւ. քհնյ. Գալստանեանը: Արժն. Տէր Հայրը սարկաւագներին եւ նրանց նուիրական ծառայութիւնը դրւատելուց յետոյ, շնորհակալութիւն յայտնեց առաջնորդ Սրբազան Հօրը, հոգշ. Հայր Սուրբին եւ հոգեւորականաց դասին, ովքեր իրենց ներկայութեամբ առաւել եռանդ են հաղորդում հաւատացեալներին՝ իրենց հաւատի մէջ ամուր մնալու համար:

Հիւրասիրութեան ընթացքում, իրենց հաճելի երգերով առաւել ջերմութիւն հաղորդեցին սարկաւագներ Ռազմիկ Գալստանեանն ու Ջանի Ղազարեանը, նաեւ սարկաւագների պատուին երգեցին տկնյք. Ռիթա Մկրտչեանն ու Լիդա Սիմոնը: Ապա գերշ. Սրբազան Հայրը Եկեղեցեաց Վարչութեան միջոցով պատրաստուած նուէրները յանձնեց սարկաւագներին:

Առաջնորդ Սրբազան Հայրը, ծրագիրը փակեց գեղեցիկ բարեմաղթանքով եւ ջերմ շնորհաւորանքներով՝ արեւշատութիւն եւ ծառայական բեղուն կեանք ցանկանալով սարկաւագներին եւ ներկայ հաւատացեալներին:

Շարունակութիւն 7-րդ էջից

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՍՏՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ...

մէջ են ծնուել եւ ապրում՝ եկեղեցիներով շրջապատուած։ Բայց սիրելի հաւատացեալներ, միայն անցեալով չպէտք է հպարտանանք, այլ պէտք է ապրենք ներկան ու նայենք վաղուան եւ հպարտանանք նաեւ գալիք իրագործումներով»:

Թեմական առաջնորդն իր պատգամն աւարտեց բարձր գնահատելով եկեղեցում ծառայած հոգեւորականների ու աշխարհականների գործունէութիւնը եւ ուժ ու կորով մաղթեց ներկայ ծառայողներին ու Թեմի զաւակներին՝ ցանկանալով, որ Բարձրեալը հաւատ եւ յոյս ներշնչի բոլորին՝ Տիրոջ խօսքի համն զգալու համար:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, ս. Աստուածածին եկեղեցու սրահում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որտեղ նոյն եկեղեցու Կանանց Յանձնախմբի անունից արտայայտուեց Սեդա Բարղեանը՝ հիմնականում անդրադառնալով եկեղեցու պատմական անցեալին: Ներկաները վայելեցին նաեւ մի քանի երգերի կատարումներ:

Տօնի կազմակերպման գործում Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի հետ համագործակցել էին՝ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւնն ու ս. Աստուածածին եկեղեցու Կանանց Յանձնախումբը:

Շարունակութիւն 9-րդ էջից

Ս. ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՏՕՆԸ...

ցիկ փաթեթաւորմամբ մրգեր նուիրեցին երեխաներին, որոնց պատրաստման աշխատանքն ինչպէս նախորդ տարիները կատարել էր մանկապարտէզ-նախակրթարանի Ծնողական Խորհուրդը:

Այնուհետեւ Տիկնանց յանձնախմբի միջոցով եկեղեցու սրահում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն, որի ընթացքում մանկապարտէզ-նախակրթարանի սաները խմբական եւ անհատական արտասանութիւններով բարեմաղթանքներ կատարեցին Ամանորի առթիւ: Իրենց երգերով գեղեցիկ մթնոլորտ ստեղծեցին նաեւ խմբավար Համիկ Ալեքսանդրեանը եւ Ռիթա Մկրտչեանը:

Հիւրասիրութեան աւարտին առաջնորդ Սրբազան Հայրն իր օրհնութիւնը փոխանցեց ներկաներին, յատկապէս մատաղ նոր սերնդի ներկայացուցիչներին՝ մաղթելով ուրախութեամբ եւ սիրով լեցուն կեանք եւ ամանորեայ անվերջ տրամադրութիւն:

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆԻՒՐԻԱԾ «ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐԻԱՆ»

Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդը կարեւորելով ապագայ սերունդների հոգեւոր եւ մտաւոր առողջ դաստիարակութիւնը փորձում է պարբերաբար կազմակերպել համագումարներ եւ դասախօսական երեկոներ հրաւիրելով մասնագէտ անձանց, որոնց օգտակար բացատրութիւններն ու խորհուրդները կարող են կեանքի ուղղութիւն տալ մեր երիտասարդներին ու ընտանիքներին: Այս տարի եւս առաջնորդուելով Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետի 2013 թւականը «Հայ Մօր Տարի» կոչելու հռչակագրի պահանջներով, Խորհուրդը, ուրբաթ՝ 2013 թւականի նոյեմբերի 1-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում կազմակերպել էր դասախօսական երեկոյ, որի համար հրաւիրել էր մասնագէտ անձանց՝ Թեհրանից եւ Սպահանից:

Ծրագրի սկզբում բացման խօսք ներկայացրեց օրուայ հաղորդավար Թովմա սրկ. Գալստանեանը, ով իր խօսքն սկսեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի հռչակագրի մի հատուածի ընթերցմամբ, որի մէջ Վեհափառ Հայրապետը գեղեցկօրէն արժեւորել է հայ մօրը՝ ասելով. «*Մեր ողջ պատմութեան ընթացքում հայ մայրը հայ ժողովրդի համար ոչ միայն դարձել է տիպար մայր՝ իր կեանքում ցոլացնելով հոգեւոր, բարոյական ու ազգային սրբազան արժէքներն ու առաքինութիւնները, ոչ միայն ընտանիքի ամրակուռ սիւնն է եղել ու իր զաւակների նուիրեալ դաստիարակը, այլեւ մեր պատմութեան ամենաճակատագրական պահերին իր օրինակելի վարքագծով, ամուր կեցւածքով, անհուն զոհողութեամբ, քրիստոնէական հաւատի պահպանութեան, ինչպէս նաեւ ազգաշինութեան ու հայրենաշինութեան սրբազան առաքելութեանը բերած իր ամբողջանուէր ու յանձնառու մասնակցութեամբ եղել է բարձրագոյն աստիճանի յարգանքի արժանի մի անձ*»:

Բացման խօսքից յետոյ, հաղորդավարը հերթաբար ներկայացրեց եւ բեմ հրաւիրեց օրուայ դասախօս-մասնագէտներին: Ծրագիրն ընդգրկում էր երեք դասախօսութիւն, որոնք ներկայացուեցին ըստ հետեւեալի.-

ա) Թեհրանից հրաւիրուած հոգեբան-մանկավարժ եւ Թեհրանի «Էլբիս Ֆերահեան» (նախկին «Քուշեշ») մանկապարտէզի տարիների տեսչուհի եւ հայերէնագիտական երեկոյեան դասընթացների մանկավարժութեան դասախօս տկն. Այրինա Նորավեանը ընդհանուր գծերով ներկայացրեց «Հայ մանկան եւ պատանու դաստիարակութիւնը ներկայ նորոյթներին եւ մոլութիւններին զուգահեռ» նիւթը: Նա լուսարձակի տակ առաւ նորօրեայ տեխնոլոգիայի մեզ տրամադրած զանազան հնարաւորութիւնների, այսինքն՝ համացանցի, հեռուստացոյցի, համակարգչի, ձեռքի հեռախօսների, համակարգչային խաղերի եւ այլնի դրական եւ բացասական կողմերը, շեշտելով յատկապէս դրանց անզուսպ եւ չափազանցուած օգտագործութեան պատճառած վնասները, ծնողներին, յատկապէս հայ մայրերին, իբրեւ նոր սերնդի դաստիարակութեան կենտրոնական անձերի, խորհուրդ տուեց տրամաբանական սահմաններ ճշտել՝ յօգուտ իրենց զաւակների առողջ հոգեմտաւոր դաստիարակութեան:

բ) Յաջորդ դասախօսութիւնը՝ «Մայրը՝ զաւակի ճիշտ սննդառութեան հսկիչ-պատասխանատու» նիւթով, սահիկների ցուցադրմամբ, պարսկերէն լեզուով ներկայացուեց Սպահանի Բժշկական Համալսարանից սննդառութեան ճիւղում աւագ-մասնագիտութիւն ստացած տկն. Բահրէյնեանի միջոցով: Նա 2 տարեկանից մինչեւ 18 տարեկան մանուկ, պատանի, երիտասարդների առողջ սննդակարգի վերաբերեալ համառօտ բայց միեւնոյն ժամանակ համապարփակ բացատրութիւններ ներկայացրեց, եւ շեշտելով, որ փոքր տարիքից սկսեալ առողջ սնունդների չափաւոր օգտագործումը մեծապէս դրական ազդեցութիւն է ունենում բարձր տարիքում եւս առողջապահական բարդոյթներից խուսափելու համար, մայրերին յորդորեց լրջօրէն հետեւել եւ գիտական ուսումնասիրութիւններով ճշտուած սահմանումներով կարգաւորել իրենց զաւակների սննդառութիւնը:

Շարունակութիւնը՝ 15-*րդ էջում*

Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ «ՏԱԹԵՒ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ՝ ՆՒԻՐՒԱԾ «ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐՒԱՆ» ԵՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՍՏՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ 400-ԱՄԵԱԿԻՆ

Ուրբաթ՝ նոյեմբերի 22-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, հովանաւորութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, տեղի ունեցաւ ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթեւ» երգչախմբի 13-րդ տարեկան համերգը, նուիրուած «Հայ Մօր Տարւան» եւ Նոր Ջուղայի ս. Աստուածածին եկեղեցու 400-ամեակին: Ձեռնարկին ներկայ էին նաեւ՝ քահանայից դասը, ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները եւ համայնքի անդամները:

Ծրագրի սկզբում, երգչախմբի Վարչութեան անունից բացման խօսքով հանդէս եկաւ Արմէն Թահմազեանը՝ շեշտելով. «*Մարիամ Աստուածածինն այն միակ սուրբն է, որն արժանի եղաւ ծնելու եւ մայրը կոչւելու Յիսուս Քրիստոսի։ Նա մայրը կոչւեց նաեւ քրիստոնեայ աշխարհի։ Քրիստոնեայ աշխարհում, յատկապէս հայ ժողովրդի մօտ, իր յատուկ տեղն է ունեցել սուրբ Կոյսը՝ իր մայրութեան օրինակով, հեզութեամբ, անմեղութեամբ, իմաստութեամբ, քաջութեամբ ու բարութեամբ։ Եւ հաւատացեալ հայ մայրն այդ յատկութիւններն է օգտագործում իր զաւակների դաստիարակութեան համար*»:

Բացման խօսքից յետոյ, երգչախմբի արհեստավարժ անդամների միջոցով հնչեցին մօրն ու մայրական սիրուն նուիրուած եւ օրօրոցային 15 երգեր, որոնցից 8-ը կատարուեցին խմբի, իսկ մնացեալը՝ մենակատարների միջոցով: Մեներգութեամբ հանդէս եկաւ նաեւ երգչախմբի ղեկավար Համիկ Ալեքսանդրեանը: Համերգում ներկայացուած բարձրաճաշակ արուեստի կողքին ուշագրաւ էին նաեւ օրուայ առիթներին համահունչ պատկերների ցուցադրումն ու հայկական պարային ելոյթները, որոնք իրականացուեցին Անեթ Քեշիշեանի միջոցով, որոշ երգերին զուգահեռ:

Հարկ է նշել, որ «Մայրիկիս» (խօսք՝ Է. Գարեան) եւ «Կոյս ձեռքեր» (խօսք՝ Յ. Շիրազ) երգերի երաժշտութեան հեղինակը խմբավար Համիկ Ալեքսանդրեանն էր: Ներկայացուած երգերի մի բաժինը հնչեց ղեկավարի միջոցով դաշնամուրի կենդանի նուագակցութեան ներքոյ:

Գեղեցիկ մտայղացում էր նաեւ երգերի շարանի ընդմիջումը ս. Աստուածածին եկեղեցու պատմական անցեալի մասին բացատրութեամբ, որը ներկայացրեց Արմէն Թահմազեանը:

Երեկոն եզրափակուեց թեմական առաջնորդ Սրբազան Հօր հայրական օրհնանքով: Նա իր պատգամի սկզբում գնահատանքի խօսք ուղղելով «Տաթեւ» երգչախմբի անդամներին եւ ղեկավարին՝ համերգը «Հայ Մօր Տարւան» եւ ս. Աստուածածին եկեղեցու 400-ամեակին նուիրելու կապակցութեամբ, ասաց. «*Հայ մայրը զաւակներին իրար կապող միութիւն, դաստիարակ, ուսուցիչ, անարատ եւ նուիրեալ առաքեալ է։ Հետեւաբար, եթէ օրեր էլ երգենք հայ մօր մասին՝ քիչ է։ Եթէ տարւայ ամբողջ ընթացքում մեծարենք հայ մօրը՝ դարձեալ քիչ է, որովհետեւ հայ մօր արժէքն աւելի բարձր է։ Հայ մօր դերակատարութիւնն ուրիշ է մեր ընտանեկան եւ ազգային-եկեղեցական կեանքում*»:

Թեմական առաջնորդը նշելով նաեւ Աստծու կողմից ս. Մարիամի ընտրութիւնը՝ որպէս Աստուածորդու լոյս աշխարհ բերող եւ տիպար մայր, շնորհաւորեց ս. Աստուածածին եկեղեցու 400-ամեակի առթիւ եւ աւելացրեց. «*Այսօր մայր դառնալը հեշտ չէ, սակայն աւելի դժուար է հայ մայր դառնալը, քանի որ այն աւելի զոհողութիւն եւ նուիրում է պահանջում։ Հայ մօրից պահանջն աւելին է, որովհետեւ նա իր զաւակին ազգային հոգի պէտք է ներշնչի, հայեցի կրթութիւն պէտք է փոխանցի։ Հայ զաւակը պէտք է դառնայ եկեղեցու եւ հայրենիքի զաւակ*»:

ԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ «ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐՈՒԱՅ» ԱՌԹԻՒ

Շորեքշաբթի՝ նոյեմբերի 27-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, հովանաւորութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ համատեղ նախաձեռնութեամբ Թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդի ու Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութեան, «Հայ Մօր Տարուայ» առթիւ տեղի ունեցաւ դասախօսական-գեղարուեստական երեկոյ՝ նուիրուած ս. Ամենափրկչեան Վանքի եւ Հայ Կանանց Գթութեան Միութեան բարերարուհիների յիշատակին: Ծրագրին ներկայ էին՝ թեմական առաջնորդը, քահանայից դասը, ազգային մարմինների եւ ենթամարմինների, Հայ Դատի Յանձնախմբի, հայոց ազգային դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչները եւ արուեստասէր ժողովուրդ:

Երեկոյի բացումը կատարուեց օրուայ հաղորդավար Թովմա սրկ. Գալստանեանի միջոցով՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի հոչակագրի հետեւեալ հատուածի ընթերցմամբ. «*Հայ Մայրը Հայ ժողովրդի պատմութեան մայր էջի վրայ միշտ եղել է առանցքային ներկայութիւն: Նրա տիրական ներկայութիւնն ու իւրայատուկ դերակատարութիւնն ակներեւ են մեր կեանքի կրօնական, մշակութային, քաղաքական, հասարակական, մարդասիրական մարզերում ու նոյնիսկ ազատագրական պայքարում: Հնարաւոր չէ ամբողջական կերպով հասկանալ հայոց պատմութիւնը՝ առանց անդրադառնալու հայ մօր առաքելութեանը, եւ փոխադարձաբար՝ հնարաւոր չէ ճիշտ ու ամբողջական կերպով ըմբռնել հայ մօր եզակի դերը՝ առանց խորաթափանց ակնարկով քննելու հայոց պատմութիւնը*»:

Այնուհետեւ ծրագրի առաջին բաժնում բեմ հրաւիրուեց օրուայ բանախօս տկն. Քառոլին Դիլանչեանը, ով սկզբում երախտագիտութեամբ յիշեց բարերարներին՝ համայնքի կազմակերպ կեանքի մէջ մեծ ներդրում ունենալու համար, եւ ասաց. «*Եթէ Նոր Ջուղան ժամանակին ստացել է «Արտասահմանեան Հայաստան» տիտղոսը, դա եղել է այն բարեգործների շնորհիւ, ովքեր չեն խնայել իրենց նիւթականը, ժամանակը եւ աշխատանքը՝ մեր համայնքի այս կառոյցների ստեղծման ու պահպանման գործում*»: Այնուհետեւ բանախօսն անդրադառնալով բարեգործութեանը՝ շարունակեց. «*Դարեր մեր առաջնորդարանը պահպանուել ու հովանաւորուել է մեր ժողովրդի կողմից՝ կատարելու իր կրօնական, կրթական, բարեսիրական եւ այլ աշխատանքները: Այդ ընդգաւառները ոչ միայն չեն պակսել, այլեւ մեծ մասամբ աւելացել են, բայց ցաւօք պակսել են մեր ազգային կեանքի հովանաւորների եւ բարերարների թիւը, մինչդեռ այս աշխատանքը պահանջում է համախմբուածութիւն՝ մեր կառոյցները կազմակերպ վիճակում պահելու եւ դեռ աւելիով զարգացնելու համար*»:

Տկն. Դիլանչեանն իր խօսքի աւարտին կարեւորութեամբ ընդգծելով համազգային նշանակութեամբ իրագործումները՝ աւելացրեց. «*Մենք՝ որպէս մի մասնիկը համահայկական մեծ ընտանիքի, մեծ անելիքներ ունենք Արցախում մեր տարած յաղթանակները եւ Արցախի մեր անկախութիւնն ամրագրելու ուղղութեամբ: Միւս մարտահրաւէրը սիրիահայութեան հարցն է: Բոլորս անչուշտ տեղեակ ենք, թէ ինչ մեծ դժուարութիւններ են դիմագրաւում նրանք, եւ թէ ինչ նշանակութիւն կարող է ունենալ ցանկացած օգնութիւն: Վստահ ենք մեր համայնքը չի գլանայ այդ ուղղութեամբ նաեւ բարեգործական աշխատանք կատարելու*»:

Հայ մօրն առաւել վեհ ու գեղեցիկ ընծայ մատուցելու համար՝ ծրագրի կազմակերպիչներն ընտրել էին հայ երգը, որն հնչեց Հայաստանի վաստակաւոր երգչուհի՝ Աննա Մայիլեանի շուրթերից: Երգչուհին, ընկերակցութեամբ դաշնակահարուհի Էլեն Կիրակոսեանի, ներկայացրեց դասական, հոգեւոր եւ ժողովրդական երգերից կազմուած հարուստ երգացանկ՝ տաղանդաւոր կոմպոզիտորներ եւ երգահաններ՝ Կոմիտասից, Ռոմանոս Մելիքեանից, Բարսեղ Կանաչեանից, Անտոն Մայիլեանից, Ալեքսանդր Դոլուխանեանից, Կարպիս Ափրիկեանից, Պետրոս Ղափանցիից, Հայրիկ Մուրադեանից,

Դանիէլ Երաժիշտից, Էդուարդ Միրզոյեանից, Էդուարդ Բաղդասարեանից, Գեղունի Զտչեանից եւ Նիկոլ Գալանդէրեանից:

Գեղարուեստական յայտագիրը կազմուած էր երկու մասից, որի ընդմիջման պահին հաղորդավարի միջոցով ընթերցուեցին Աննա Մայիլեանի եւ Էլեն Կիրակոսեանի կենսագրականներից համառօտ բաժիններ:

Ծրագիրն աւարտուեց առաջնորդ Սրբազան Հօր հայրական օրհնանքով: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն սկզբում մատնանշեց հայ երգի զօրութիւնը, որով կարելի է զգալ ժողովրդի յոյզերն ու երազանքները, ապա կարեւորութեամբ անդրադարձաւ բարեգործութեանը՝ ասելով. «*Թող Աստուած լուսաւորի նրանց հոգիները, ովքեր առյաւէտ հեռացան մեզանից։ Մենք այսօր օգտուում ենք նրանց ժամանակին ներդրած լումաներից եւ պարտք ենք նրանց՝ այդ նուիրաբերման համար*»:

Թեմական առաջնորդն իր հայրական պատգամի աւարտին ասաց. «*Առանց հայ մօր ստեղծագործութեան, հայ աշխարհը կը մատնուի ոչնչութեան։ Զաւակների դաստիրակութեան կարեւորագոյն դերը մօր դերն է, նաեւ ընտանիքի կարեւորագոյն սիւնը մայրն է*»:

Հարկ է նշել, որ սոյն երեկոյին իւրաքանչիւրին նուիրուեց «Ձօն՝ Հայ Մայրերին» գիրքը, որը տպագրուել է «Հայ Մօր Տարւայ» առթիւ՝ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի հրամանով եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդի միջոցով: Գիրքը մի գեղեցիկ ծաղկաքաղ է հայ բանաստեղծների միջոցով հայ մօրն ու մայրական սիրուն նուիրուած բանաստեղծութիւններից:

Շարունակութիւն՝ 12-րդ էջից

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ...

գ) Ծրագրի վերջին դասախօսութիւնը, որը դարձեալ պարսկերէն լեզուով ներկայացուեց մասնագէտ-վիրաբոյժ եւ Սպահանի Բժշկական Համալսարանի Գիտական Խորհրդի անդամ դոկտորա Բահրամիի միջոցով, ունէր «Ինչպէս կանխարգելել կանանց մօտ ամենատարածուած քաղցկեղը» խորագիրը: Դկտ. Բահրամին եւս սահիկների ցուցադրումով հանդերձ իր գիտական եւ բժշկական ուսումնասիրութիւնը ներկայացրեց կանանց մօտ ամենատարածուած եւ վտանգաւոր հիւանդութիւններից մէկի՝ կրծքի քաղցկեղի մասին եւ կանխարգելման ամենապարզ միջոցները ներկայացրեց, որով հնարաւոր է լինում ժամանակին անդրադառնալ հիւանդութեան գոյութեան մասին եւ դիւրութեամբ բուժել այն, քանի դեռ նախնական իրավիճակի մէջ է: Դասախօսը խիստ կարեւոր համարեց այս հիւանդութեան նախանշանների մասին անտարբեր չլինելը, որովհետեւ ժամանակին բուժում չսկսելու դէպքում՝ հետեւանքներն անդառնալի եւ մահաբեր են:

Դասախօսութիւններն աւարտուելուց յետոյ, երեք մասնագէտները բեմ ներկայացան եւ պատասխանեցին հանդիսատեսի կողմից ուղղուած հարցումներին:

Ծրագիրը բարձր գնահատուեց ներկաների կողմից, սակայն ցաւ պէտք է յայտնել, որ նման կարեւոր եւ օգտակար ձեռնարկին ընդառաջել էին քիչ թւով ժողովուրդ: Ակնկալւում է առաւել գիտակից եւ լուրջ մօտեցում ցուցաբերել յատկապէս այն աշխատանքներին, որոնք նպատակ ունեն բարձրացնելու մեր սիրելի ծնողների ու դաստիարակների գիտութեան եւ իմացութեան մակարդակը՝ առողջ սերունդ կրթելու եւ մեծացնելու համար:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ՆՈՐԱՄՈՒՏ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՆ՝ «ԱԼԵՆՈՒՇ ՏԷՐԵԱՆ» ՍՐԱՀՈՒՄ

2013-2014 ուսումնական տարուան Նոր Ջուղայից եւ Շահինշահրից 61 հայ երիտասարդ-երիտասարդուհիներ յաջողեցին մուտք գործել երկրի տարբեր համալսարաններ՝ դոկտորայի, գերլիսանսի, լիսանսի եւ գերդիպլոմի մակարդակներում: Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհուրդը նորամուտ ուսանողներին խրախուսելու եւ գնահատելու նպատակով, նոյեմբերի 29-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում կազմակերպեց աւանդոյթ դարձած ամենամեայ գնահատման երեկոն, որտեղ հրաւիրուել էին՝ նորամուտներն ու իրենց ծնողները: Երեկոյին ներկայ էին նաեւ՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմիններին եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները:

Ծրագրի սկիզբը հանդիսացաւ հանդիսավար Կարին Տէր Մարտիրոսեանի ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքը՝ ուղղուած նորամուտ ուսանողներին, որից յետոյ ելոյթ ունեցաւ Կրթական Խորհրդի ատենապետ դկտ. Վաչիկ Հայրապետեանը: Նա կրթուած եւ գիտակից երիտասարդութեանը հայրենիքի բարգաւաճման երաշխիքը համարելով, ասաց. «*Ընտրած բնագաւառում մասնագիտանալը իւրաքանչիւր ուսանողի պարտականութիւնն է, իսկ դուք, որպէս հայ ուսանողներ, պէտք է առաւել ջանասիրաբար լծէք աշխատանքի՝ նախ կրթուելու եւ բազմակողմանի զարգանալու առումով, ապա, որպէս ազգի ներկայացուցիչներ, հայութեանը բոլորին ճանաչեցնելու համար*»: Դկտ. Հայրապետեանն իր խօսքի վերջին բաժնում նշելով, որ աշխատանքի հարցը համաշխարհային խնդիր է, նորամուտներին խորհուրդ տուեց պատկառելի աշխատանք գտնելու համար՝ փայլեն իրենց աշխատասիրութեամբ, մասնագիտութեամբ, պատասխանատուութեամբ եւ ստեղնագործութեամբ, չմոռանալով նաեւ ուսումը բարձրագոյն մակարդակներում շարունակելու մասին:

Ապա Թեմական Խորհրդի անունից եւս խօսք հնչեց՝ ատենապետ պրն. Նոէլ Մինասեանի միջոցով: Սկզբում նա շնորհաւորանքներ ուղղեց նորամուտներին, նրանց՝ ծնողներին եւ ուսուցիչներին, ապա դիմելով յաջողակ երիտասարդներին, ասաց. «*Ձեր կեանքի այս կարեւոր հանգրւանը պէտք է սկսէք նոր եռանդով ու ոգեւորութեամբ եւ ձեր գիտութիւնն ու հնարաւորութիւնները պէտք է ծառայեցնէք հայ ժողովրդի ընդհանրական նպատակներին*»: Պրն. Մինասեանն իր խօսքի աւարտին նշելով, որ համալսարան մուտք գործելու առաջին պահերից, ուսանողներից սպասւում է լինել առաւել չափով գիտակից ու պատասխանատու, անդրադարձաւ հայ ուսանողութեան վճռորոշ դերակատարութեանը պատմութեան տարբեր հանգրւաններում՝ ի մասնաւորի հայ ազգային ազատագրական պայքարում եւ Իրանի իսլամական յեղափոխութեան գործում:

Թեմական Խորհրդի խօսքից յետոյ, ձեռամբ առաջնորդ Սրբազան Հօր, Թեմական ու Կրթական խորհուրդների ատենապետների եւ Պատգամաւորական Ժողովի Դիւանի փոխատենապետի, գնահատագրերով եւ «Պատմութիւն Նոր Ջուղայի» գրքերով պարգեւատրուեցին նորամուտները:

Երեկոյի եզրափակիչ խօսքն արտայայտեց թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը: Նա կարեւորելով այսօրուայ ուսման եւ յառաջադիմութեան աշխարհի հետ համընթաց քայլելը՝ յորդորեց ներկայ ուսանողներին՝ զինուել ու լիցքաւորուել գիտութեամբ: Առաջնորդ Սրբազան Հայրն իր խօսքի շարունակութեան մէջ շեշտելով, որ պէտք է կրթութիւնն իմաստաւորել եւ արժեւորել, թելադրեց գիտակցութեամբ մօտենալ ուսմանը, աշխատասիրութեամբ եւ յարատեւ ջանքով իրականացնել նպատակները, հաւատարիմ լինել ազգային սկզբունքներին ու սրբութիւններին եւ պատասխանատու ու յանձնառու լինել ազգային եւ անձնական կեանքում:

Միջոցառումն աւարտուեց ընդունելութեամբ:

Üàð æàôÔ²ÚÆÐ²Ú ºÎºÔºò²ê¾ð Î²Ü²Üò Ðà¶ºôàð È ê²ð²ÜÆ ºô §ÞàôÞ²ÜÆÎ¦ ºð¶â²ÊØ´Æ ÐÆØÜ² ¸ðàôÂº²Ü 10-²Øº²ÎÆÜ ÜôÆðô²Ì Ðà¶ºôàð Òº èÜ²ðÎ

Երկուշաբթի, դեկտեմբերի 9-ի կէսօրից յետոյ ժամը 5-ին, Նոր Զուղայի ս. Աստուածածին եկեղեցում տեղի ունեցաւ հոգեւոր պատշաճ ձեռնարկ՝ Նոր Զուղայի Հայ Եկեղեցասէր Կանանց Հոգեւոր լսարանի եւ «Շուշանիկ» երգչախմբի հիմնադրութեան 10-ամեակի առթիւ, որը նուիրուած էր Հայ մօր տարւան եւ Նոր Զուղայի ս. Աստուածածին եկեղեցու կառուցման 400-ամեակին: Նկատի ունենալով, որ օրը համընկնում էր նաեւ ս. Կոյս Մարիամ Աստուածածնին վերագրուող տօներից մէկին՝ Յղութիւն ս. Աստուածածնի յԱննայէ տօնին, այդ պատճառով ձեռնարկը միաժամանակ նշումն էր սոյն տօնի:

Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Զարեանը, հոգեւորականաց դասը եւ եկեղեցու ամբողջ ժողովրդատեղին լցրած բարեպաշտ հայորդիներ: Սկզբում ծրագրի բացումը կատարեց Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, ով խմբի կազմաւորման առաջին օրից իսկ վարում է հոգեւոր լսարանի աշխատանքները: Արժն. Տէր Հայրն իր խօսքի մէջ անդրադարձաւ ս. Կոյս Մարիամ Աստուածածնի մայրութեան գերագոյն տիպարի մասին եւ գեղեցիկ կերպով արժեւորեց հայ մօր եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարութիւնները հայ ժողովրդի կեանքի մէջ: Նա նշելով, որ ս. Կոյսը եղել է նաեւ Հոգեւոր լսարանի եւ «Շուշանիկ» երգչախմբի անդամուհիների համար կնութեան եւ մայրութեան ամենավեհ օրինակը, ասաց. «*Իզուր չէ, որ հայերս մեզ համար սրբութիւնները կոչել ենք մայր տիտղոսով՝ Մայր Հայաստան, Մայրենի լեզու, Մայր եկեղեցի*...»:

Տէր Հօր արտայայտութիւններից յետոյ, «Շուշանիկ» երգչախմբի ղեկավար Անուշ Յովհաննիսեանը ներկայացրեց Հոգեւոր լսարանի եւ «Շուշանիկ» երգչախմբի հիմնադրութեան եւ 10-ամեայ գործունէութեան տեղեկագիրը, որը թէեւ ամփոփ, սակայն բազմաժաւալ աշխատանքի մասին էր վկայում: Խումբը ոչ միայն ներկայութիւն է ունեցել Նոր Զուղայի եկեղեցիներում կատարուող բոլոր տեսակի արարողութիւններին, այլ մասնակցել է նաեւ թեմի հեռաւոր շրջանների եւ գիւղերի եկեղեցիներում մատուցուող ս. Պատարագներին եւ իր երգեցողութեամբ առաւել պայծառացրել արարողութիւնները: Տեղեկագրում շեշտուել էր նաեւ, որ Նոր Զուղայի եկեղեցիների տիկնանց յանձնախմբերը հիմնականում կազմուել են Հոգեւոր լսարանի եւ «Շուշանիկ» երգչախմբի անդամուհիներից:

Այնուհետեւ ձեռնարկն ունեցաւ գեղեցիկ ընթացք, որն ամբողջութեամբ հոգեւոր մթնոլորտ զարգացրեց եկեղեցում: Հոգեւոր լսարանի անդամուհիներ՝ Մարիամ Թահմազեանի, Մառիթա Կարապետեանի, Շուշիկ Ղազարեանի, Անահիտ Աղախանեանի, Վարդուհի Յովսէփեանի, Ռիթա Մկրտչեանի, Իշխան Թորոսեանի, Անժէլ Ղարախանեանի, Ռիմա Ուղուրեանի, Ժենիկ Քեշիշեանի, Ալվարդ Զարգարեանի եւ Ռիմա Մարկոսեանի միջոցով ընթերցուեցին աստուածաշնչական բոլոր այն հատուածները, որոնք վերագրում են ս. Կոյս Մարիամ Աստուածածնին, նաեւ Վեհանուշ Խուդաբախշեանը, Մառիթա Կարապետեանը, Անիա Մարգարեանը, Անժէլ Ղարախանեանը եւ Ալվարդ Զարգարեանը դարձեալ ս. Կոյսին նուիրուած խորհրդաւոր եւ գեղեցիկ հատուածներ ներկայացրին ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» աշխատութիւնից: «Շուշանիկ» Երգչախումբը, Անուշ Յովհաննիսեանի նուագակցութեամբ, Հայոց Եկեղեցու երգացանկից ս. Աստուածածնին ձօնուած շարականներ եւ տաղեր երգեց:

Ամբողջ ծրագրի ընթացքում, ընթերցումները, աղօթքներն ու երգերն ընդմիջելով, Անուշ Յովհաննիսեանը բացատրութիւններ ներկայացրեց ս. Աստուածածին եկեղեցու շինութեան, պատմականի, յատկապէս ս. Կոյսին նուիրուած որմնանկարների եւ Նոր Զուղայում ս. Աստուա-

ծածնի տօներին առնչուող սովորութիւնների վերաբերեալ, նաեւ գեղեցկօրէն կատարեց «Վարանիմ ի մեղաց» հոգեզմայլ մեղեդին:

Ծրագրի աւարտին իր հայրական խօսքն ու օրհնութիւնը փոխանցեց թեմական առաջնորդ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը: Նա շնորհաւորելով Հոգեւոր լսարանի եւ «Ծուշանիկ» երգչախմբի կազմաւորման 10-ամեակի առիթով՝ իր գնահատանքի խօսքն ուղղեց անդամուհիներին՝ աւելի քան մէկ ժամ տեւող հոգեւոր լիցքեր հաղորդող ծրագրի կազմակերպման եւ իրականացման կապակցութեամբ: Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց ծրագիրը Հայ մօր տարաւ եւ ս. Աստուածածնին նուիրելու նախաձեռնութիւնը եւ յոյս յայտնեց, որ օրըստօրէ խտանան լսարանին եւ երգչախմբին մասնակցող անձանց շարքերը՝ իրենց մէջ ընդգրկելով բոլոր տարիքներին, յատկապէս երիտասարդ խաւին պատկանող աղջիկներ եւ կանայք: Տ. Բաբգէն եպս. Զարեանը գնահատելով նաեւ Հոգեւոր լսարանի եւ երգչախմբի անցնող 10 տարիների վաստակը՝ դրուատանքի խօսքեր ուղղեց նրանց եւ ասաց. «*Լսարանին մասնակցող կանայք, սերտելով մեր հաւատի սկզբունքները եւ եկեղեցական կեանքի գանագան բնագաւառներում իրենց մասնակցութիւնը բերելով՝ կարողացել են իրենք իրենց գտնել այնպիսի հոգեւոր մի գէնքով, որ այսօր մենք կարիք ունենք ամենուրեք՝ ամրապնդելու քրիստոնէական ճշմարիտ հաւատի մէջ եւ դիմակայելու բոլոր աղանդաւորական եւ չեղիչ շարժումներին*»: Թեմական առաջնորդն իր խօսքի աւարտին աղօթք բարձրացնելով՝ դիմեց ս. Կոյս Մարիամի բարեխօսութեանը՝ իր որդու՝ Յիսուս Քրիստոսի մօտ միջնորդ հանդիսանալու՝ իր գթառատ աչը մշտապէս հովանի դարձնելու մեզ վրայ եւ խաղաղութիւն հաստատելու ամբողջ աշխարհում:

Ծրագիրը փակուեց «Տէրունական աղօթք»-ով, որ երգեցին ներկայ բոլոր հաւատացեալները՝ միասնաբար:

Եկեղեցու բակում, հիւսիսային դռան կից, կազմուել էր Հոգեւոր լսարանի եւ երգչախմբի անդամուհիների անհատական եւ խմբային աշխատանքներից գողտրիկ մի ցուցահանդէս, որտեղ ցոյցի էին դրուել նաեւ լուսանկարներ եւ բոլոր այն նիւթերը, որոնք Լսարանի սերտողական պահերի ընթացքում փոխանցուել էին: Նշենք, որ բոլոր ներկաներին բաժանուեց «Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածին» խորագրով գրքոյկը, որն իր մէջ բովանդակում էր գրեթէ ծրագրի ամբողջ ընթացքը՝ զարդարուած ս. Կոյսի վերաբերեալ եւ Նոր Ջուղայի ս. Աստուածածին եկեղեցու որմնանկարներից լուսանկարներով: Գրքոյկը պատրաստել էր Անուշ Յովհաննիսեանը՝ այն նուիրելով Հոգեւոր լսարանի եւ երգչախմբի 10-ամեակին:

Ծրագրից յետոյ, եկեղեցու սրահում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն, որի ընթացքում սեղանավարի դերով հանդէս եկաւ Ռիթա Մկրտչեանը: Նա հերթաբար հրաւիրեց Անասիկ Յովսէփեանին, Արեգա Յարութիւնեանին, Վեհանուշ Խուդաբախշեանին, Անուշ Յովհաննիսեանին, լսարանի եւ երգչախմբի հիմնադիր անդամուհիներ՝ Արաքս Յարութիւնեանին եւ Ովսան Ղարախանեանին՝ ներկայանալու, ովքեր գեղեցիկ մեներգերով, ասմունքներով, իւրովի բանաստեղծութեամբ եւ սրտի խօսքով հանդէս եկան եւ արժանի ձօներ ընծայեցին ս. Կոյս Մարիամ Աստուածածնին եւ հայ մօրը: Գեղարուեստական յայտագրի աւարտին սեղանավարը եւս ներկայացաւ մեներգով:

Ձեռնարկն աւարտուեց գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի գնահատանքի եւ բարի երթի խօսքերով:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԵՒ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ԴՊՐՈՑՆԵՐԻ 2012-13 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԱԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Նախաձեռնութեամբ Նոր Ջուղայի «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների տնօրինութիւնների, ուսուցչական կազմերի ու Ծնողական խորհուրդների, ուրբաթ՝ դեկտեմբերի 13-ի երեկոյեան, Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում տեղի ունեցաւ 2012-13 ուսումնական տարեշրջանի շրջանաւարտների վկայականաբաշխման հանդիսաւոր արարողութիւնը, որին ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչները, շրջանաւարտների ծնողները եւ հիւրեր:

Երեկոն, որը նուիրուած էր ուշ-միջնադարի բանաստեղծ-աշուղ Սայաթ Նովայի ծննդեան 300-ամեակին, բացուած յայտարարուեց հանդիսավար Մանիա Ղուկասեանի միջոցով Սայաթ Նովայի հետեւեալ խօսքի մէջբերմամբ. «*Ցիրիք բան կայ՝ հոքու մարմնու կարգումն է, գիր սիրէ, դալամ սիրէ, դաւթար սիրէ*», որից յետոյ դահլիճ հրաւիրուեցին շրջանաւարտները:

Այնուհետեւ ուսուցչական խօսքն ընթերցեց, «Քանանեան» դպրոցի փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը, որն իր արտայայտութիւնները բաժանելով հետեւեալ գլուխների՝ ազգային վարժարանի առաքելութիւն, արժէքներ, ուսուցիչներ, համայնք-ազգային դպրոց փոխ-յարաբերութիւն, ազգային դպրոցի աշակերտի նկարագիր, թիմային աշխատանքներ եւ խորհրդատու՝ կարեւորութեամբ նշեց հայոց դպրոցների առաքելութիւնը եւ ասաց. «*Հայոց դպրոցի նպատակն է կազմաւորուող հայ սերնդի համար ստեղծել հայեցի մթնոլորտ, կարեւորութեամբ փոխանցել մեսրոպաչունչ հայ լեզուն եւ ծանօթացնել հայ-ազգային մշակոյթին, պատմութեանը եւ հոգեւոր հարստութեանը, արթնացնել նրա մէջ ազգային պատկանելիութեան խոր գիտակցութիւն, հպարտութիւն եւ ազգային իրաւունքների հիմնաւորուած պահանջատիրութիւն, տալ նրան ամբողջական համապարփակ ուսում, որպէսզի նա կարողանայ դիմագրաւել կեանքի հրամայականները, որդեգրել պետական կրթական ծրագրեր, փոխանցել նրան մարդկային բարոյական արժէքների կարեւորութիւնը, աշխուժացնել դասանիւթերի կողքին հաւաքական աշխատանքները, գիտական, մարզական, արուեստի եւ այլ բնագաւառներում, որոնք բոլորն էլ խիստ կարեւոր են աշակերտի հոգեկան եւ ֆիզիքական աճի ու զարգացման համար*»: Նա իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով հայկական վարժարանների աշակերտութեանը՝ այսպէս շարունակեց. «*Ազգային դպրոցը՝ աշակերտին հաւասարակշռուած եւ բարերար նախաձեռնութիւններով մի գաղափարի շուրջ է համախմբում եւ մասնակից դարձնում գործին ու մղում դէպի մարդկութեան, ազգին եւ համայնքին ծառայելու։ Աշակերտը սովորում է արտայայտուել, դատել եւ գնահատել, մի խօսքով լինել ազատ՝ խօսքի եւ գործի մէջ։ Ազգային դպրոցների վառ ապացոյցը մեր համայնքային կեանքում ազգային դպրոցի շրջանաւարտներն են, որոնք ապրում եւ արարում են նոյն սկզբունքով եւ հոգերանութեամբ՝ ազգային դպրոցներից ստացած հայաշունչ եւ ազատ դաստիարակութեան շնորհիւ*»:

Յաջորդիւ ծրագիրը շարունակուեց շրջանաւարտների իրագործմամբ բաժիններով: Նախ Մեղրի Ղուկասեանի, Սառա Ներսիսեանի, Մարալ Ղարիբեանի եւ Արեգա Ծատուրեանի միջոցով ներկայացուեց Սայաթ-Նովայի կեանքն ու գործունէութիւնը, իսկ պարային շարժումներով հանդէս եկան Անասիկ Կարապետեանը, Նելինէ Մինասեանը, Անի Տէր-Յովհաննիսեանը եւ Մարալ Ղարիբեանը: Նշելի է, որ գեղարուեստական այս հատուածին զուգահեռ պաստառի վրայ ցուցադրուեց Փարաջանովի «Նռան գոյնը» ֆիլմից հատուածներ:

Ապա յանուն Թեմի Կրթական Խորհրդի արտայայտուեց Սաթօ Աւետումեանը՝ իր խօսքում ընդգծելով. «*Ազգային ամբողջ համակարգը շարունակ իր աշխատանքի կիզակէտում է պահում հայկա-*

կան դպրոցների խնդիրները, բծախնդրօրէն հետեւելով համայնքի գարկերակը հանդիսացող հայկական դպրոցի կեանքին եւ գործունէութեանը։ Արդարեւ մեր դպրոցներն օժտուած լինելով նոր ժամանակների պահանջների հետ քայլ պահող կրթական ծրագրով, նիւրեալ տնօրինութեամբ եւ ուսուցչական

կազմով, վստահութեամբ են նայում ապագային եւ իրենց գործունէութեամբ արդարացնում են հսկայ նիւթա-բարոյական ներդրումը, որը կատարւում է Թեմիս առաջնորդի, Թեմական եւ Կրթական խորհուրդների եւ ազգային մարմինների միջոցով՝ կրթական ոլորտի զարգացման ուղղութեամբ»: Վերջում Կրթական Խորհրդի ներկայացուցիչը յորդորեց շրջանաւարտներին, որ դառնան բարձրակարգ մասնագէտներ եւ արժանաւոր հայեր:

Ապա աշակերտական խօսքն ընթերցեցին Թենի Բաղրամեանը եւ Վահագն Մինասեանը, որտեղ յանուն բոլոր շրջանաւարտների շնորհակալական խօսք էր ուղղուած իրենց բոլոր ուսումնական տարիների ուսուցիչ-ուհիներին:

Յաջորդ բաժնում հայրենասիրական եւ ժողովրդական երգերի կատարմամբ ելոյթ ունեցան Արեգա Յարութիւնեանը, Անի Բաբումեանը, Փարելի Թահմազեանը եւ Արփա Պօղոսեանը, իսկ արտայայտութիւններով ու քաղցր յուշերով ներկայացան Գեւիկ Ասատրեանը, Անասիկ Ծառուկեանը եւ Մհեր Դաւթեանը:

Այնուհետեւ շրջանաւարտները «Ազգ իմ փառապանծ» եւ «Վերջին զանգ» երգերի խմբական կատարմամբ առաւել ոգեւորեցին ու յուզեցին ներկաներին:

Ծրագրի յուզումնալից պահերից էր նաեւ շրջանաւարտների աւանդական երդման արարողութիւնը, որտեղ Անի Տէր Յովհաննիսեանը եւ Վահագն Խուդաբախշեանն արտասանեցին երդման բառերը, իսկ միւսները միաձայնութեամբ «Երդւում եմ» ասելով՝ հաստատեցին այն:

Կատարումներից յետոյ, ընթերցւեց իւրաքանչիւր շրջանաւարտի արձանագրած յաջողութիւնները եւ ձեռամբ՝ Սրբազան Հօր, ազգայինների եւ պատկան ուսուցիչ-ուհիների նրանց շնորհուեց վկայականներ:

Ծրագրի աւարտին իր հայրական օրհնանքը տուեց գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, որտեղ շնորհաւորելով եւ գնահատելով շրջանաւարտներին, կոչ արեց նրանց. «*Ուր էլ որ լինէք, որ համալսարանն էլ, որ յաճախէք, շատ լաւ իմացէք, որ դուք հայ աշակերտ էք, հայ ժողովրդի գաւակներն էք եւ վաղը ձեր ստացած գիտութիւնը պէտք է փոխանցէք ձեր ժողովրդին։ Դուք պէտք է մուտք գործէք մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանք եւ պէտք է ձեր ներդրումն ունենաք ու ձեր աջակցութիւնը ցուցաբերէք։ Ձեր ուսումն ու գիտութիւնը պէտք է փոխանցէք ուրիշներին եւ դրանով կարժեւորէք ձեր վկայագրերը, ստացած գիտութիւնը եւ դաստիարակութիւնը*»:

Հարկ է նշել, որ երեկոյի ընթացքում հնչած երգերի եւ պարի ուսուցումը հերթաբար կատարուել էին նախորդ տարիների շրջանաւարտներ՝ Մհեր Պօղոսեանի եւ Վանէ Շահիջանեանի միջոցով, իսկ ծրագրին առնչւող հրատարակչական աշխատանքները կատարել էր շրջանաւարտ Վերգինէ Միրզախանեանը:

Վերջում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն զոյգ դպրոցների Ծնողական խորհուրդների կազմակերպմամբ:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ 400-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՎԱԾ ԳՐՔԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ

Ուրբաթ՝ նոյեմբերի 22-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Հայոց Ազգային Կրթահամալիրի սրահում, նախաձեռնութեամբ «Քանանեան» աղջկանց եւ «Կարտարինեան» տղայոց ուղեցոյց ու միջնակարգ դպրոցների տեսչական եւ ուսուցչական կազմերի ու Ծնողական խորհուրդների, տեղի ունեցաւ ամենամեայ գրքի ցուցահանդէս-վաճառքի բացման հանդիսաւոր ծրագիրը, որն այս տարի նուիրուած էր ս. Աստուածածին եկեղեցու 400-ամեակին:

Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների, Հայ Դատի Յանձնախմբի, միութիւնների եւ դպրոցների ներկայացուցիչները եւ ժողովուրդ:

Ցուցահանդէսի բացումը կատարուեց առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ՝ ժապաւէնի հատումով: Այնուհետեւ օրուայ հաղորդավար Կարին Տէր Մարտիրոսեանը բարի գալուստ մաղթելով ներկաներին՝ նրանց հրաւիրեց վայելելու ցուցահանդէսը, որտեղ խնամքով դասաւորուած էին տարբեր լեզուներով վերջերս լոյս տեսած գրքեր եւ հետաքրքիր մտքի խաղեր:

Ծրագրում ներառուած էր նաեւ բացատրութիւններ «Ալիք» օրաթերթի, «Պայման» մշակութային պարբերաթերթի եւ «Պատմութիւն Նոր Ջուղայի» գրքի մասին: Իրանահայութեան միակ հայերէն լեզուով օրաթերթի՝ «Ալիք»-ի անցեալի եւ ներկայ աշխատանքների մասին բացատրութիւններ տուեց Մանիա Ղուկասեանը: Վերգինէ Միրզախանեանը հակիրճ եւ բովանդակալից տեղեկութիւններ փոխանցեց «Պայման»-ի մասին, իսկ վերջում «Քանանեան» դպրոցի ուսուցչուհիներ Քառոլին եւ Սեդա Դիլանչեանները ներկայացրին Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամեակի առթիւ՝ վերահրատարակուած Յարութիւն Թ. Տէր Յովհանեանի «Պատմութիւն Նոր Ջուղայի» գիրքը:

Յատկանշական է, որ ցուցահանդէսի իւրաքանչիւր կրպակ ուէր համապատասխան աֆիշ, ուր պարունակում էր կրպակի առնչութեամբ բացատրութիւն:

Ծրագրի պաշտօնական աւարտին «Քանանեան» դպրոցի փոխ-տեսուչ Ռիմա Սիմոնեանը ներկայացրեց Նոր Ջուղայում գործող գրադարանների պատասխանատուներին՝ «Արմէն» տարրական դպրոցի գրադարանվարուհի Այդա Ալեքսանդրեանին, «Քանանեան» եւ «Կատարինեան» ուղեցոյց ու միջնակարգ դպրոցների գրադարանի պատասխանատու Կարին Տէր Մարտիրոսեանին, Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան գրադարանի պատասխանատու Երանուշ Թահմազեանին եւ ս. Ամենափրկչեան Վանքի «Ներսէս Շնորհալի» գրադարանի պատասխանատու Վերգինէ Միրզախանեանին:

Մինչ ներկաները շարունակում էին դիտել ցուցահանդէսը եւ օգտուել կազմակերպած համեստ հիւրասիրութիւնից, ներկայ աշակերտութիւնը գնում էր իրեն հետաքրքրող գրքեր:

Մէկ շաբաթեայ ցուցահանդէս-վաճառք այցելեցին հոծ թւով ընթերցասէրներ՝ Նոր Ջուղայից եւ Շահինշահրից:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԷՍԸ

Նոր տարւայ նախօրէին, ուրբաթ՝ դեկտեմբերի 27-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, նախաձեռնութեամբ՝ Նոր Ջուղայի Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութեան եւ ուսուցչական կազմի, տեղի ունեցաւ դպրոցի աւանդոյթի վերածուած Ամանորի հանդէսը:

Տօնական այս միջոցառմանը, որին կարելի է համարել նաեւ համառօտ հաշուետուութիւն փոքրիկների ուսուցման եւ վարժեցման ուղղութեամբ կատարւած մեծ աշխատանքի, ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների եւ դպրոցների ներկայացուցիչներն ու սաների հարազատները:

Սկզբում Ամանորի բարեմաղթանքներով հանդէս եկաւ դպրոցի տեսչուհի Քառոլին Դիլանչեանը, ով յոյս յայտնեց, որ նոր տարին բոլորի, ի մասնաւորի՝ մանուկների համար բերի ջերմութիւն, քնքշութիւն ու երազանքների իրականացում: Բացման խօսքից յետոյ, բեմը, որտեղ ուշագրաւ էին յատկապէս խորհրդանշական քաղցրաւենիքներով զարդարւած եղեւնիները, տրամադրւեց Մանկապարտէզի Մանուշակագոյն եւ Դեղին խմբակների սաներին:

Օրւան պատշաճ պարերով, արտասանութիւններով ու երգերով համեմւած այս ներկայացման սկզբում, միապաղաղ կեանքից ձանձրացած երեխաները փորձում են մի նամակով խնդրել Ձմեռ-Պապին, որ շուտ գայ, իսկ հասցէատիրոջը գտնելու եւ նամակը յանձնելու համար՝ նրանք ընտրում են անտառի նապաստակներին: Փնտրտուքի պահին բեմ են մուտք գործում փաթիլներն ու հեքիաթների հերոսները, ովքեր նոյնպէս անհամբերութեամբ էին սպասում ալեհեր պապիկին: Վերջում ուրախ մանուկները Ձմեռ-Պապի ժամանման լուրն են աւետում բոլորին, եւ յանկարծ ներս են մտնում փոքրիկ Ձմեռ-Պապն ու Ձիւնանուշը՝ իրենց հետ բերելով բարեմաղթանքներ եւ գեղեցիկ խօսքեր:

Վերջում, տօնական երգերի եւ արտասանութիւնների խմբական կատարումներից յետոյ, մանկապարտէզի սաները Ձմեռ-Պապիկից ստացան գեղեցիկ փաթեթներով աւանդական մրգեր:

Երկրորդ արարը, որն իրագործւեց Նախակրթարանի աշակերտութեան միջոցով, ներկայացնում էր Ամանորը՝ հայկական աւանդական ընտանիքում, որտեղ տօնական օրերին ընդառաջ գնալու համար պակասում էր հայկական լաւաշը: Տնեցիները որոշում են լաւաշ թխել եւ այդպիսով սկսւում է տքնաջան աշխատանքը՝ սկսած ցորենի հնձումից մինչեւ հաց թխելը, որը գեղեցկօրէն ներկայացւեց փոքրիկ կատարողների բացատրութիւններով ու դերասանութեամբ: Ի վերջոյ պատարաստւում է հացը եւ բոլորն ուրախանում են, երգում ու պարում: Ներկայացման աւարտին խմբին միացան եարժիշտ Կարէն Եօնոքեանն ու սաների ծնողներից խմբավար Համիկ Ալեքսանդրեանը, որոնք աւանդական ընտանիքի տօնն առաւել ջերմացրին իրենց սրինգի ու դափի երաժշտութեան ներքոյ: Սոյն ծրագիրը նոյնպէս ողողւած էր համահունչ խօսքերով, երգերով ու պարային շարժումներով, որին նոյնպէս գնահատեց Ձմեռ-Պապը՝ գեղեցիկ մրգեր բաժանելով:

Զւարճալի կատարումներով յագեցած երեկոն եզրափակւեց թեմական առաջնորդ Սրբազան Հօր պատգամով: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը գնահատանքի խօսք ուղղեց դպրոցի տեսչութեանը, ուսուցչական կազմին, Ծնողական Խորհրդին, նաեւ բոլոր ծնողներին, ովքեր համագործակցաբար եւ տքնաջան աշխատանքով նման ձեռնարկ էին իրականացրել: Այնուհետեւ Սրբազան Հայրը դիմելով դպրոցի սաներին բարձր գնահատեց նաեւ նրանց գեղարւեստական ելոյթները եւ յորդորեց, որ հնազանդ ու աշխատասէր աշակերտներ լինեն, որպէսզի Աստուած եւ Յիսուս մանուկը սիրեն ու գնահատեն նրանց:

«ԴԷՊԻ ԱՐՑԱԽ» ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ-2013-Ի ՇՐՋԱԳԾՈՒՄ ՆՒԻՐԱՀԱՒԱՔ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Հինգշաբթի՝ նոյեմբերի 28-ին, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ «Ռուբէն» Երիտասարդական Միութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ նուիրահաւաք՝ «Հեռուստամարաթոն 2013»-ի շրջագծում:

Նուիրահաւաքին իրենց մասնակցութիւնն էին բերել՝ ազգային մարմինները, միութիւնները, հայոց ազգային դպրոցները եւ ժողովուրդը: Նուիրահաւաքի կենտրոն այցելելով՝ նուիրատուութիւն կատարեց նաեւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, որը սոյն միջոցառման մասնակցելը հայ ժողովրդի գոյապայքարին մասնակից դառնալը համարելով՝ յորդորեց իւրաքանչիւրն իր կարողութեան չափով կատարի այս ազգային պարտաւորութիւնը:

Միջոցառման ամբողջ ընթացքում ներկայ ժողովուրդն առիթ ունեցաւ պաստառի վրայ հետեւելու «Հեռուստամարաթոն-2013» ծրագրին, իսկ փոքրիկները սրահում տեղադրուած նկարչութեան կրպակում մեծ խանդավառութեամբ նկարեցին հայրենասիրական թեմաներով նկարչութիւններ:

Արդիւնքում հանգանակուած գումարը գերազանցեց նախորդ տարուան:

ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ-2013 22,661,372 ԱՄՆ ԴՈԼԱՐ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄՔԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄ՝ ՅԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԲԱՐՕՐՈՒԹԵԱՆ

«yerkirmedia.am» - 22 միլիոն 661 հազար 372 ամերիկեան դոլար. այսպիսին է 2013 թւականի «Հայաստան» համահայկական հիմնադրամի յայտարարած հեռուստամարաթոնի հանգանակութեան ընդհանուր արդիւնքը:

12 ժամ շարունակ, ողջ աշխարհով հեռարձակուող հեռուստամարաթոնի ընթացքում աշխարհի տարբեր հատուածներում ապրող հայերը իրենց մեծ ու փոքր նուիրատուութիւններով մասնակցեցին Արցախի երկրորդ ռազմավարական ճանապարհի՝ Վարդենիս-Մարտակերտ մայրուղու կառուցման համար կազմակերպուած հանգանակութեանը:

Մինչ այդ, նախորդ շաբաթ կայացել էր հիմնադրամի համաեւրոպական հեռախօսամարաթոնը, որի արդիւնքում հաւաքուել էր արդէն մէկ միլիոն 460 հազար եւրո: Յիշեցնենք, որ նախորդ տարի հիմնադրամի՝ «Մեր գիւղը» կարգախօսով 15-րդ հեռուստամարաթոնի արդիւնքում հաւաքուել էր 21 միլիոն 422 հազար 477 դոլար կամ շուրջ 8.5 մլրդ. դրամ:

Ներկայացնում ենք հեռուստամարաթոն 2013-ի նախնական տուեալներն ըստ երկրների, դոլարային հաշուարկով:

Ռուսաստան՝ 12.350.000, ԱՄՆ Արեւմտեան շրջան (Լոս Անջելէս)՝ 2.000.000, Ֆրանսիա, Գերմանիա, Հոլանդիա, Յունաստան, Բելգիա (Համաեւրոպական հեռախօսամարաթոն)՝ 1.981.626, Հայաստան՝ 1.600.000, Շուէյցարիա՝ 1.250.000, Արցախ՝ 1.000.000, ԱՄՆ Արեւելեան շրջան (Նիւ Եօրք)՝ 1.000.000, Արգենտինա՝ 700.000, Տորոնտո՝ (Կանադա) 225.000, Բրազիլիա՝ 170.000, Մոնրէալ (Կանադա)՝ 120.000, Անգլիա՝ 100.000, Լիբանան՝ 94.000, Աւստրիա՝ 10.000:

* «ԱԼԻՔ» - Տեղեկացնենք, որ նոյեմբերի 28-ին, Իրանում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան նախաձեռնութեամբ, դեսպանատան շէնքում եւս տեղի է ունեցել դրամահաւաք, որին ակտիւօրէն մասնակցել են իրանահայութեան ներկայացուցիչները: Իրանահայութեան կողմից հեռուստամարաթոնին նուիրաբերած գումարը կազմում է 60.000 ԱՄՆ դոլար:

ՋԱՒԱԽՔԻՆ ՆՒԻՐՒԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆ

Շորեքշաբթի՝ դեկտեմբերի 11-ի երեկոյեան ժամը 7-ին, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, նախաձեռնութեամբ շրջանի Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբի, Ջաւախքին նուիրուած ծրագրերի շարանում, առաջին անգամայ համար տեղի ունեցաւ ազգային-յեղափոխական երգերի մանկական փառատօն՝ մասնակցութեամբ Նոր Ջուղայի «Արմէն» տարրական կրթահամալիրի եւ Շահինշահիի «Սրբոց Վարդանանց» տարրական դպրոցի չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ դասարաններից 21 աշակերտաշակերտուհիների:

Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անդամները, ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները, մասնակիցների հարազատներն ու հոծ թւով ժողովուրդ:

Սոյն փառատօնին, որի հաղորդավարներն էին՝ Մանիա Ղուկասեանն ու փոքրիկ Մինելի Ղազարեանը, Նոր Ջուղայից մասնակցել էին 8, իսկ Շահինշահիից 13 աշակերտներ, ովքեր մանկական, ազգային եւ յեղափոխական երգերի գեղեցիկ եւ համարձակ կատարումներով ոգեշնչեցին ներկաներին: Երեկոյի կատարողներին էին՝ Դաւիթ Յովհաննիսեանը՝ «Փառք Դաշնակցութեան», Լիանա Ղազարեանը՝ «Կարմիր կակաչներ», Դերիկ Թահմազեանը՝ «Գետաշէն», Սիսիան Քալանթար Օհանեանը՝ «Պատերազմ էք գնում», Արութին Թորոսեանը՝ «Բարձրիկ Հայաստան», Նոյեմի Ղարիբեանը՝ «Մայրիկ», Վաչէ Քեշիշեանը՝ «Երազ իմ երկիր», Արմէն Քեշիշեանը՝ «Հայեր միացէք», Արգիշտ Նազարեանը՝ «Պայքարը հայոց», Արփինէ Մովսիսեանը՝ «Թիկունքդ լայն», Նարեկ Փանոսեանը՝ «Հայ կամաւորներ», Էրիկ Դանիէլը՝«Աստուածաշունչ», Անի Սիմոնեանը՝ «Գետաշէն», Սէրլի Ղարախանեանը՝ «Բարձրիկ Հայաստան», Արւին Մինասքանեանը՝ «Ղարաբաղ», Նարեկ Հախնազարեանը՝ «Ախպէրս ու ես», Սեւակ Իսաղուլեանը՝ «Խուժան Ասկեր», Ռիմեթա Նազարեանը՝ «Թող հնչէ շեփոր», Անի Մկրտչեանը՝ «Ինչ են խօսում մրջիւնները», Սելին Մկրտչեանը՝ «Ծիրանի երգը» եւ Վանէ Օրօջեանը՝ «Երեւան»:

Թէեւ մասնակիցներից շատերը բեմից մենակատարմամբ հանդէս էին գալիս առաջին անգամայ համար, սակայն նրանց սրտաբուխ կատարմուների եւ ներդրած եռանդի շնորհիւ հանդիսատեսը մեծ բաւականութիւն ստացաւ: Գնահատելի էր նաեւ այն մեծ աշխատանքը, որը կատարուել էր՝ Շահինշահիի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, մասնակից դպրոցների տեսչութիւնների, խմբավար Մեղեդի Քալանթար Օհանեանի եւ երաժշտական գործիքաւորող Հարմա Կարապետեանի միջոցով, ովքեր երգերի ընտրութեան եւ մասնակիցների վարժեցման գործում օժանդակել էին կազմակերպիչ յանձնախմբին:

Ելոյթների աւարտին առաջնորդ Սրբազան Հօր, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դաւթեանի եւ կազմակերպիչ յանձնախմբի նախագահ Անդրուհի Ջաւահիրեանի ձեռամբ փոքրիկ մասնակիցներին եւ օժանդակող անհատներին շնորհուեցին յուշանուէրներ ու գնահատագրեր:

Երեկոն եզարփակուեց գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի հայրական օրհնանքով, որտեղ Սրբազան Հայրը գնահատանքի խօսք ուղղելով «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբին՝ մանկուկների մասնակցութեամբ Ջաւախքին նուիրուած երգի փառատօն կազմակերպելու համար, շնորհաւորեց փոքրիկ մասնակիցներին՝ գեղեցիկ եւ համարձակ ելոյթների կապակցութեամբ եւ յորդորեց՝ յիշել ու պաշտպանել Ջաւախքի ներկան եւ ապագան ու զօրավիգ հանդիսանալ Ջաւախքում ապրող մեր քոյրերին ու եղբայրներին:

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ ՆՇՒԵՑ Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 123-ԱՄԵԱԿԸ

Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրման 123-ամեակը մեծ շուքով նշուեց ուրբաթ՝ նոյեմբերի 15-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, նախաձեռնութեամբ շրջանի Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբի:

Ձեռնարկին ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անդամները, քահանայից դասը, ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչները, գաղափարակից ընկերներ եւ հոծ թւով ժողովուրդ:

Սկզբում Գեղարդ Մանսուրեանի հրահանգի ներքոյ դրօշակագարդի միջոցով սրահ մուտք գործեցին Հ.Հ. եւ Հ.Յ.Դ. դրօշները, որոնց ծածանումից յետոյ, հնչեց Հ.Յ.Դ. քայլերգ «Մշակ բանւոր»-ը:

Այնուհետեւ օրուայ հանդիսավար Արթին Մուրադեանը հակիրճ կերպով ներկայացրեց Դաշնակցութեան հիմնադրութիւնն ու գործունէութիւնը, որից յետոյ ընթերցեց օրուայ բանախօս Հրանտ Մարգարեանի կենսագրականը եւ բեմ հրաւիրեց նրան արտայայտուելու:

Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչն իր խօսքի առաջին բաժնում կարեւորութեամբ անդրադառնալով Հայաստանի ներկայ իրավիճակին՝ ի մասնաւորի արտագաղթին, որպէս ազգային անվտանգութեանն սպառնացող երեւոյթ, դրա հիմնական պատճառները համարեց՝ անգործութիւնը, անբաւարար աշխատավարձն ու հասարկութեան մէջ առկայ անարդարութիւնը եւ ասաց. «*Այս երեւոյթի հիմքում ընկած են նաեւ միջազգային տնտեսական տագնապը, երկրի շրջափակումը Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից, խորհրդային սպառուած տնտեսական համակարգի ժառանգութիւնը, սակայն ամենամտահոգիչ հարցն այն է, որ իշխանութեան կողմից որեւէ ճիգ չի նկատւում արտագաղթի պատճառները վերացնելու կամ մեղմելու ուղղութեամբ*»:

Օրուայ բանախօսն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով նաեւ Դաշնակցութեանը, որպէս Հայաստանի քաղաքական դաշտում այլընտրանք՝ իր գաղափարախօսութեամբ, արժէքային համակարգով, ծրագրով եւ ռազմավարութեամբ, շարունակեց. «*Դաշնակցութիւնը տարբեր է Հայաստանում գործող միւս քաղաքական ուժերից, որոնք յաճախ փորձում են երկրի վիճակն աւելի վատ ներկայացնելով, իրենց իշխանութիւն դառնալու հնարաւորութիւնները բարձրացնել: Մենք այդպիսի մօտեցում չունենք: Մենք աւերակների վրայ չենք ուզում իշխել: Դաշնակցութիւնն արդէն հրապարակի վրայ է դրել արտագաղթի դէմ պայքարելու իր ծրագիրը*»:

Հրանտ Մարգարեանն իր արտայայտութիւնների վերջին բաժնում կարեւորելով այն փաստը, որ Դաշնակցութիւնը որպէս ազգային կուսակցութիւն, կարողացել է իր կազմակերպական ցանցն ունենալ եւ գործունէութիւն ծաւալել ոչ միայն դասական, այլեւ վերջին 23 տարիների ընթացքում ձեւաւորուած Սփիւռքում, անդրադարձաւ նաեւ երեք կարեւոր խնդիրներին՝ Սիրիահայութեան օժանդակութեանը, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին միջազգային ճանաչման

Շարունակութիւնը՝ 27-րդ էջում

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆԻ ՄԱՀՒԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՒԻՐՒԱԾ ՅՈՒՇԵՐԵԿՈՅ

Հինգշաբթի՝ դեկտեմբերի 5-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, նախաձեռնութեամբ «Թադէոս Թադէոսեան» Պատանեկան Միութեան, տեղի ունեցաւ յուշերկոյ՝ նուիրուած Հ.Յ.Դ. հիմնադիրներից՝ Սիմոն Զաւարեանի մահուան 100-րդ տարելիցին:

Ծրագրին, որն ամբողջովին իրագործուել էր պատանի-պարմանուհիների միջոցով, ներկայ էին՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի անդամներ, ազգային մարմինների ներկայացուցիչներ, «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութեան անդամներն ու իրենց ծնողները եւ հոծ թուով ժողովուրդ:

Յուշերեկոյի մեկնարկը տրուեց տեսանիւթի ցուցադրմամբ, որտեղ լուսարձակի տակ էր առնուել Զաւարեանի իւրայատուկ յատկանիշները եւ բարոյական անբիծ նկարագիրը՝ որպէս մտաւորական եւ ազգային գործիչ: Այնուհետեւ միջոցառման բացման խօսքը հնչեց օրուայ հաղորդավար Շաղիկ Մատթէոսեանի միջոցով, որտեղ կարեւորութեամբ ասուած էր. «*Զաւարեանը կարող էր իրեն նուիրել գիտութեանն ու մանկավարժութեանը եւ այդ ասպարէզներում լինել լաւագոյններից, եթէ հայրենիքի փրկութեան գաղափարներով տոգորուած, ի վերջոյ, կեանքն անմնացորդ չնուիրէր յեղափոխական գործին։ Մեր նոր շրջանի պատմութեան մէջ նա այն մարդկանցից է, որը կարողացաւ համախմբել գրիչը, սուրը եւ աշխատանքը, եւ ի վերջոյ այս երեքն են մեր ազգի յարատեւութեան գաղտնիքը*»:

Բացման խօսքին յաջորդեց Վահագն Խուդաբախշեանի բանախօսական ելոյթը: Նա իր ելոյթի առաջին բաժնում անդրադառնալով Հ.Յ.Դաշնակցութեան ծնունդին՝ աւելացրեց, որ Դաշնակցութեան ծնունդը երբեք ինքնանպատակ չէր, այլ պատմական անհրաժեշտութիւն, այն ծնունդ առաւ, որ ապահովի Հայաստանի եւ հայ ժողովրդի անվտանգութիւնն ու զարգացումը: Այնուհետեւ օրուայ բանախօսը նշելով Դաշնակցութեան խիղճը մարմնաւորող եւ «Աշխարհիկ սուրբ» կոչումը կրող Զաւարեանի լայնածաւալ գործունէութիւնը՝ ի մասնաւորի 1890 թւականից մինչեւ իր մահը՝ 1913 թւականը, ասաց. «*Զաւարեանը որոշ կողմերով հակապատկերն էր Քրիստափորի, համակ եռանդ, կեանք ու շարժում։ Ըմբոստ, հպարտ, գերազանցապէս ուրոյն, անկախ մի նկարագիր։ Երրորդութեան մէջ ամենից գիտունն էր եւ գուցէ ամենից հարցասէրը։ Ամենից շատն էր շփուել ժողովրդային զանգուածների հետ եւ գլուխը լեցուն էր այլազան գիտելիքներով եւ տեսութիւնների պաշարով*»: Խօսքի մի այլ բաժնում Վահագն Խուդաբախեանը ներկայացնելով Սիմոն Զաւարեանին՝ որպէս

մարդ եւ ազգային ու կուսակցական գործիչ, վեր հանեց նրա իւրայատուկ յատկանիշները եւ կուսակցութեան մէջ ունեցած առաջնակարգ դերակատարութիւնը, կարեւորութեամբ ընդգծելով. «*Զաւարեանն ամէն տեղ էր՝ որտեղ գործ կար, կուսակցական ամէն տեսակի գործ, յաճախ ինքն իրեն մոռանալով։ Սպառիչ եւ մաշեցնող աշխատանքները, ինչպէս նաեւ իր ֆիզիքականի հանդէպ անհոգութիւնը իր յանկարծական մահուան պատճառն եղան։ Զաւարեանի համար անկարելի էր ականատես լինել ջարդերի, հալածանքների եւ շահագործումների ու անտարբեր մնալ նրանց նկատմամբ։ Այսպէս, երբ*

Կիլիկիայից Թիֆլիս է վերադառնում, ընկերները որոշում են հանգիստ տալ, եւ մօտ մէկ ամիս մնում է առանց կուսակցական գործի. ժողովի ընթացքում նա ոտքի է կանգնում եւ գործ է պահանջում»:

Այնուհետեւ երեկոն շարունակւեց ասմունքների եւ յեղափոխական երգերի մենակտարումներով, նաեւ հաղորդավարի միջոցով օրւան պատշաճ խօսքերով ու մէջբերումներով:

Գեղարւաստական կատարումների շարանում մենակատարմամբ հանդէս եկան՝ Վանայ Շիրւանեանը՝ «Առաքել, Մուշեղ» եւ «Պիտի գնանք», Արգին Շահմիրզայեանը՝ «Հայ կամաւորներ», Թանգիկ Միրզախանեանը՝ «Մայր ծնող», Թենի Մկրտչեանը՝ «Դրոյի երգը» եւ Էնրիքօ Զէյնալեանը՝ «Քեզի յարգանք» երգերով, իսկ Վանէ Յարութիւնեանը՝ «Զօն Դաշնակցութեան հիմնադիրներին» եւ Մեղրի Ղուկասեանը՝ «Զօն՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» ասմունքներով: Ապա հնչեց «Թադէոս Թադէոսեան» Պատանեկան Միութեան Վարչութեան խօսքը՝ Սեւադա Պետրոսեանի ընթերցմամբ, որտեղ ասւած էր. «*Զաւարեանի խօսքերը դուրս գալով իր ժամանակի նեղ սահմաններից՝ այժմ էլ հնչում են որպէս օրւայ պատգամ. նրա ներշնչած հաւատին ու լաւատեսութեան կարիքն ունենք բոլորս: Իսկ նրա կերտած անշահախնդիր, նւիրւած ու համեստ տիպարի ընդօրինակումը մեզ համար հրամայական է բոլոր ժամանակներում: Եւ այսօր, նրա վախճանումից հարիւր տարի անց, մենք՝ Պատանեկան Միութեան անդամներս, մեր յարգանքի տուրքը մատուցելով նրա անթառամ յիշատակին խոստանում ենք դառնալ նրա գծած յեղափոխական ուղու անկեղծ գինւորները, դաւանել նրա վսեմ գաղափարներին եւ գործել այնպէս, որ արժանի լինենք նրա նկարագրած ու ստեղծած բարոյական գաղափարներին*»:

Յուշերեկոյի եզրափակումը կատարւեց Պատանեկան Միութեան անդամների միջոցով «Մեզ միացնողը Դաշնակցութիւնն է» երգի եւ յեղափոխական երգերի շարանի խմբական կատարումներով:

Շարունակութիւն՝ 25-րդ էջից

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ ՆՇՒԵՑ Հ.Յ.Դ...

շրջագծում աշխատանքներին եւ Լեռնային Ղարաբաղի անկախութեան ճանաչմանը՝ յոյս յայտնելով, որ բոլոր խնդիրները յաղթահարւելու են ազգային միասնականութեամբ եւ պատասխանատւութեամբ:

Բովանդակալից բանախօսութեանը յաջորդեց Սիրիայից հրաւիրւած երգիչ Գրիգոր Թութունճեանի (Գոգօ) կատարմամբ ազգային-յեղափոխական երգերը: Երգչի ոգեշնչող կատարումներին ձայնակցում էին նաեւ դահլիճում ներկաները:

Գեղարւեստական կատարումների շարանում Արթին Մուրադեանն ասմունքեց «Դաշնակցութիւն» բանաստեղծութիւնը, որից յետոյ, երեկոն եզարփակւեց «Արիւնոտ դրօշ» քայլերգով՝ ներկաների յոտնկայս եւ զգաստ ունկնդրութեամբ:

Üàð æàôÔ²ÚÆÐ²ÚàôÐº²ò ´²ðº¶àðÌ²Î²Ü ÀÜÎºðàôÂº²Ü ´²ðºêÆð²Î²Ü ºôÜä²êî²Ø²îàÚò¶àðÌàôÜ¾àôÂÆôÜÀ

Հասարակական կեանքում շատ են այնպիսի անհատներ, ովքեր իրենց մասնագիտութեամբ ու փորձառութեամբ ձեռք բերուած կարողութիւններն ի սպաս են դնում միւսների բարօրութեան գործին եւ մարդասիրական աշխատանքների իրականացմանը: Կարելի է համարձակօրէն յայտարարել, որ կայուն հասարակութիւն են կազմում այնպիսի ժողովուրդներ, ովքեր աստուածահաճոյ արարքներով ջանք չեն խնայում՝ միմեանց աջակցելու եւ նեցուկ հանդիսանալու:

Նոր Ջուղայի հայ համայնքում իր մարդասիրական եւ բարեսիրական աշխատանքներով ու եռանդուն գործունէութեամբ աւելի քան 120 տարի է ինչ աչքի է ընկնում Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը: Ընկերութիւն, որն իր բեղուն գործունէութեամբ նշանակալից դեր է ունեցել ոչ միայն Նոր Ջուղայի եւ Սպահանի Հայոց Թեմի, այլեւ իրանահայութեան կեանքում՝ իր աշխատանքների առանցքը համարելով բարեգործութիւնը: Այս բազմամեայ Ընկերութիւնն անհնարինը հնարաւոր դարձնելու վճռականութեամբ, իր անդամուհիների ամուր եւ ուրոյն հոգեբանութեան, բարեգրթութեան, ջերմ վերաբերմունքի ու տքնաջան աշխատանքի շնորհիւ, երկար տարիներ կարողացել է սատարել ոչ-բարեկեցիկ կեանք վարող հայրենակիցներին՝ երբեք չնահանջելով իր առաքելութիւնից:

Բարեսիրական եւ նպաստամատոյց գործունէութեան շրջագծում Ընկերութիւնն իր հիմնադրման պահից սկսեալ, իրագործել է բազմաբնոյթ աշխատանքներ, ինչպիսին են՝ որբերի, աղքատների, այրի կանանց եւ այլ կարիքաւորների բարեկեցութեան մասին հոգ տանելը եւ աշխատատեղիների ու արհեստանոցների ստեղծումը, իսկ հայրենասիրական ծրագրերի առնչութեամբ՝ նիւթական եւ բարոյական աջակցութիւն է ցուցաբերել Հայրենիքին՝ յատկապէս վերջին 11 տարիների ընթացքում Ջաւախքին նուիրած դաշտահանդէսների կազմակերպմամբ եւ հասոյթը ջաւախքահայութեան օժանդակման գործին յատկացմամբ:

Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնն արուեստը զարգացնելու, հայուհու ձեռարուեստը բոլորին ծանօթացնելու, ընտանիքների նիւթականն ապահովելու եւ տնային տնտեսուհիներին աշխատանք տրամադրելու միտումով, իր մնայուն վաճառանոցից բացի, սկսեալ 1998 թւականից, 15 տարիներ շարունակ, ամառային արձակուրդներին, ս. Ամենափրկչեան Վանքի ցուցահանդէսների սրահում, կազմակերպել է ձեռարուեստի ցուցահանդէս-վաճառք, որտեղ իւրաքանչիւր այցելու կարող է վայելել հայի նրբաճաշակ աշխատանքը: 2013 թւականի օգոստոսին նոյնպէս կայացաւ ամենամեայ ցուցահանդէս-վաճառքը, որի բացումը կատարուեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի ձեռամբ եւ ինչպէս միշտ ցուցադրուած իրերն եզակի էին իրենց բազմազանութեամբ, գունագեղութեամբ ու բազմերանգութեամբ:

Ընկերութիւնը Հայ Կանանց Գթութեան Միութեան հետ համատեղ նախաձեռնութեամբ, «Հայ Կնոջ Տարեայ» առթիւ կազմակերպեց նաեւ Նոր Ջուղայի հին եւ նոր ձեռագործներից բացառիկ ցուցահանդէս, իսկ իր 120-ամեակի առթիւ, բազմամեայ գործունէութիւնը լուսարձակի տակ առնելու նպատակով՝ իրագործեց իւրայատուկ ցուցահանդէս՝ կատարուած աշխատանքների լուսանկարներով, Միութեան արխիւներով եւ արդէն հնութիւն դարձած իրերով:

Բարեգործական Ընկերութիւնը համահայկական նշանակութեամբ աշխատանքներին նոյնպէս իր մասնակցութիւնն է ցուցաբերել, որոնց շարանում կարելի է թուարկել ամենամեայ հեռուստամարաթոնների նուիրատուութիւն կատարելը, սիրահայութեան օժանդակութեան գործին մասնակցութիւն ցուցաբերելը եւ այլն:

Ուժ ու կորով ենք մաղթում Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան անդամուհիներին՝ յաջողութիւն ցանկանալով նրանց իրենց նուիրական գործում եւ կեանքի բոլոր ասպարէզներում:

ԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆԻՒՐՒԱԾ «ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐԻԱՆ»

Հինգշաբթի՝ դեկտեմբերի 19-ի երեկոյեան, Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, նախաձեռնութեամբ Հայ Ուս. Զհարմահալ Միութեան Նոր Զուղայի Մասնաճիւղի Վարչութեան, տեղի ունեցաւ «Հայ Մօր Տարեան» նուիրուած միջոցառում, որտեղ ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, հոգեւորականաց դասը, Թեմի ազգային մարմինների ու միութիւնների ներկայացուցիչները եւ Միութեան անդամ-ուհիները:

Միջոցառումը բացուած յայտարարեց հանդիսավար Վեհանուշ Խուդաբախշեանը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառի «Հայ Մօր Տարեայ» հոչակագրից հատուածի ընթերցմամբ, որից յետոյ բեմ հրաւիրեց օրուայ բանախօս հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանին: Հայր Սուրբն իր խօսքն սկսեց հետեւեալ տողերով. «*Երանի բոլորս Շիրազի տաղանդն ունենայինք, որպէսզի այնքան գեղեցիկ նկարագրէինք մեր սէրը մեր մայրերի հանդէպ։ Երանի այնքան ուժ ունենայինք, որ կարողանայինք աստղեր նուիրել մեր մայրերին, կամ մեր սիրտը հանէինք ու նուիրէինք նրանց, որ տեսնէին մեր մեծ սէրն իրենց հանդէպ։ Բայց կարծում եմ դրա կարիքը չունի ոչ մի մայր, որովհետեւ մեր որդիական սէրը չնչին է նրանց անսահման մայրական սիրոյ համեմատ*»։

Բանախօսն անդրադառնալով հայ մօր տիպարին եւ ազգային-հասարակական կեանքում ունեցած նրա դերակատարութեանը, յատկապէս Սօսէ Մայրիկին, Դիանա Աբգարին, Լուսինէ Զաքարեանին, աւելացրեց. «*Հայ կնոջ եւ հայ մօր նոր ու անզուգական չափանիշերը սահմանեցին հայ կանայք, յատկապէս յետեղեռնեան տարիներին, երբ հայրենի հողից գրկւելով, ստիպւած եղան ապաստանել անծանօթ ու խորթ երկրներում եւ նրանց անչափելի զոհողութիւնների, նուիրումի ու հաւատի յոյսով էր, որ հայ ազգը յառնեց մոխիրներից, ոտքի կանգնեց եւ իր երթը շարունակեց դէպի գալիքներ։ Այդ ժամանակ էր, որ հայրենի ընօրրանի յուշն ու յիշատակն իր գաւակներին փոխանցելը, դարձաւ հայ կնոջ նոր դաւանանքը, որպէսզի ազգը դիմանայ եւ ազգի ապագայ սերունդներն իրենց իրաւունքների տէրը դառնալու բախտին արժանանան*»։

Հայր Սուրբն իր խօսքի վերջին բաժնում կարեւորելով 21-րդ դարում հայ մօր ունեցած դերակատարութիւնը, ասաց, որ հայ մայրը պէտք է մնայ, բարոյական, հոգեւոր ու ազգային արժէքների ճառագայթող ներկայութիւն եւ պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ ու լրջութեամբ պէտք է տէր կանգնի մատաղ սերնդին ու հայրենիքին:

Այնուհետեւ ծրագիրը շարունակւեց գեղարուեստական յայտագրով, որտեղ ասմունքով հանդէս եկան՝ Վեհանուշ Խուդաբախշեանն ու Նոռա Շահիջանեանը, իսկ գեղեցիկ ձայներով երգեցին՝ մասնաճիւղի «Մեղեդի» մանկա-պատանեկան երգչախմբի անդամ Վանէ Օրոջեանը եւ ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթեւ» երգչախմբի անդամներ՝ Փարելի Թահմազեանը, Ժաքլին Շահիջանեանն ու Անասիկ Յովսէփեանը՝ ղեկավարութեամբ Համիկ Ալեքսանդրանի:

Ծրագիրն իր աւարտին հասաւ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի հայրական խօսքերով, որտեղ Սրբազան Հայրը շնորհաւորելով «Հայ Մօր Տարին», ասաց. «*Հայ մօր արժանիքների մասին կարելի է շատ երկար խօսել, բայց ես հայ մօր մասին խօսելիս ասում եմ մի քանի ճշմարտութիւններ՝ նուիրում, զոհողութիւն, խոնարհութիւն եւ հեզութիւն*»։ Թեմական առաջնորդն անդրադառնալով հայ մօր տիպարին՝ աւելացրեց. «*Մենք կարող ենք թւել ու թւել հայ մօր զոհաբերութիւնները, սակայն հայ մօր պարտականութիւնն աւելին է։ Նա պէտք է հայ-քրիստոնէական դաստիարակութիւն տայ իր գաւակին։ Ինչքան դժւար է մայր եւ առաւել հայ մայր դառնալը, քանի որ նա պէտք է ունենայ բարոյականութիւն՝ իր գաւակներին դաստիարակելու ու ընտանիքի սիւններն ամրապնդելու համար*»։

ԿԵՊՆՔԸ Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՌՈԲԵՐՏ ԲԵԳԼԱՐԵԱՆԻ ԱՅՑԸ

Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր՝ Ռոբերտ Բեգլարեանը, Նոր Ջուղա ժամանումների ծրագրի մէջ յաճախակիօրէն ունենում է պաշտօնական եւ ոչ-պաշտօնական հանդիպումներ՝ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեան անդամների հետ: Հանդիպումների ժամանակ մօտիկից ծանօթանում է Միութեան ծաւալած աշխատանքներին, տարբեր բնագաւառներում ձեռք բերած յաջողութիւններին, նաեւ խնդիրներին ու դժուարութիւններին, եւ հարկ եղած պարագաներում իր աջակցութիւնն է ցուցաբերում Միութեանը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ «ԿՈՒՆԿ» ՀԱՄՈՅԹԻ ՊԱՏԻՒՆ

Արաբական Միացեալ Էմիրութիւններում կայացած «Կունկ» համոյթի համերգից վերադառնալուց յետոյ՝ համոյթի անդամ-ուհիների ծնողները նոյեմբերի 11-ի երեկոյեան, Միութեան յարկի տակ կազմակերպել էին ընդունելութիւն ի պատիւ «Կունկ» համոյթի, որին բացի համոյթի անձնակազմից հրաւիրուած եւ ներկայ էին Կենտրոնական Վարչութեան ներկայացուցիչները, Մշակութային Միաւորի Վարչութեան անձնակազմը եւ ծնողները:

Ծնողների անունից ներկաներին ողջունեց, ապա շնորհաւորանքի ու շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ Ալենուշ Մարտոյեանը, ապա խօսքը փոխացեց Կենտր. Վարչութեան անդամ՝ Վարուժ Մինասեանին, ով շնորհակալական խօսքերի կողքին թւարկեց այն անձանց անունները, ովքեր հիւրընկալման առումով սատար էին հանդիսացել պատւիրակութեանը: Այնուհետեւ զեկոյցի տեսքով արտայայտուեցին համոյթի գեղարուեստական ղեկավար՝ Ռիմա Սիմոնեանը, խմբին ընկերակցող Մշակութային Միաւորի Վարչութեան նախագահ Քարմէն Ղեւեանը, ընդհ. պատասխանատու Լորեթա Դաւթեանը: Իրենց շնորհակալութիւններն ու տպաւորութիւները կիսեցին նաեւ Մհեր Խուդաբախշեանն ու պարախմբի աւագ անդամ Նարէ Ասատրեանը: Եւ այսպէս իւրաքանչիւրն իր հերթին իրենց ապրած հետաքրքիր պահերի, քաղցր յուշերի ու յաջող ելոյթի մասին խօսելով՝ նոյն ուրախ ու բարձր տրամադրութիւնը փոխանցեցին ներկաներին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՊԱՏԻՒՆ

Թէեւ իւրաքանչիւր ազգային գործիչ իր կամքով ու առանց որեւէ սպասելիքի է մասնակցում ազգային նպատակներին ուղղուած աշխատանքներին, սակայն ղեկավարութեան կողմից ուշադրութեան արժանանալը դառնում է ոգեւորիչ ուժ՝ առաւել աշխոյժ մասնակցելու եւ ակտիւ գործնէութիւն ծաւալելու՝ ի խնդիր համայնքային կեանքի բարելաւմանն ու աժխուժացմանը: Այսպիսի մի միջոցառում էր՝ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան 2012-2013 թթ. գործնէութեան աւարտի առթիւ կազմակերպած ընդունելութիւնը, որ ընթրիք-երեկոյի տեսքով, ուրբաթ՝ դեկտեմբերի 6-ի երեկոյեան ի մի բերեց միութենական կեանքի վերելքին աջակցող վարչական ու ոչ-վարչական պատասխանատու հանգամանքով մի մեծ բանակի, որոնց անշահախնդիր գործնէութեան շնորհիւ Միութեան եւ Շահինշահիր Մասնաճիւղի երկամեայ գործնէութիւնը, Միութեան բա-

ժանմունքների անդամ-ուհիների համագործակցութեամբ հասաւ իր յաջող աւարտին:

Միութեան Կենտրոնական Վարչութեան կողմից կազմակերպուած գնահատանքի երեկոն, ողջոյնի խօսքով բացեց օրուայ հանդիսավարուհի Նայիրի Թահմազեանը: Նա անդրադառնալով երեկոյի կազմակերպման նպատակներին, խօսքը փոխանցեց Կենտրոնական Վարչութեանը, որի անունից ելոյթ ունեցաւ Վարուժ Մինասեանը: Պրն. Մինասեանը, որ մինչեւ վերջին ամիսները Կենտրոնական Վարչութեան նախագահի համգամանքով, վարում էր Միութեան աշխատանքները, իր արտայայտութիւնների մէջ շնորհակալական խօսքերի կողքին ասաց. «*Միութենական կեանքում եթէ արձանագրւում են յաջողութիւններ, դա համարւում է բոլորիս յաջողութիւնը, եւ եթէ լինում են բացթողումներ ու դժւարութիւններ -որ յաճախ կապւած են լինում հնարաւորութիւնների սահմանապակ լինելուն- դարձեալ վերագրւում է մեզ իւրաքանչիւրիս, իսկ յաջողութեան հասնելու համար անհրաժեշտ են արդիական հնարաւորութիւններ, որի մասին խօսելիս նկատի ունենք ոչ միայն արդիական սարքաւորումների, այլ նաեւ նոր գործելաոճի, դեկավար ուժի ու աշխատանքին լաւատեղեակ մարդուժի մասին, որոնք կարող են մեծ դերակատարութիւն ունենալ ազգային-միութենական աշխատանքների յաջող ընթաքին*»: Նա իր խօսքը աւարտեց շնորհակալական խօսքերով ուղղուած Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանին, Իսլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բէգլարեանին, ազգային իշխանութեանը, շրջանիս Հայ Դատի Յանձնախմբին ու միութենականներին՝ իրականացւած ծրագրերին սատար հանդիսանալու եւ համագործակցութեան համար: Կենտրոնական Վարչութեան խօսքին յաջորդեց՝ գնահատագրերի շնորհում՝ Շահինշահրի Մասնաճիւղի Վարչութեան անձնակազմին, Միութեան Երէցների, Մշակութային, Մարզական եւ Ուսանողական միաւորների վարչութիւնների ու Սկաուտական Միաւորի Գերագոյն Մարմնի անձնակազմերին, միաւորների բաժանմունքների պատասխանատուներին, Կարգապահական Կազմին, Ֆուտբոլի Յանձնախմբին, 24 եւ 25-րդ Գարնանային Խաղերի, 21 Սեպտեմբերի ու Ամանորի հանդիսութիւնների գործադիր յանձնախմբերին եւ մի շարք անձանց, որոնց համագործակցութեան շնորհիւ իր յաջող աւարտին է հասել Միութեան երկամեայ բեղուն գործունէութիւնը:

Գնահատագրերը յանձնեցին Կենտրոնական Վարչութեան անդամներ Նապիկ Մելիքեանը, Միգանուշ Տէր Մարտիրոսեանը, Վարուժ Մինասեանը, Նորիկ Պողոսեանը, Էդուարդ Ղազարեանը եւ Զարեհ Յովսէփեանը:

Երեկոն լի էր հետաքրքիր արտայայտութիւններով, շնորհաւորանքի ու շնորհակալական խօսքերով եւ կենդանի երաժշտութեան ներքոյ ուրախ ժամանցով:

ՆՈՐ ՏԱՐԻԱՆ ԸՆԴԱՌԱՋ՝ ՎԱՃԱՌՔ-ՏՕՆԱՀԱՆԴԷՍ Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՍՐԱՀՈՒՄ

Ուրբաթ՝ դեկտեմբերի 13-ի ամբողջ օրը, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան յարկի տակ տօնական էր: Առիթը Նոր Տարւայ առթիւ կազմակերպւած վաճառք-տօնահանդէսն էր, որ համախմբել էր Նոր Զուղայի հայ հասարակութեանը: Միութեան Կենտրոնական Վարչութեան նախաձեռնած վաճառքին (ի նպաստ միութիւնների) մասնակցում էին Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը, Փերիոյ Կրթասիրաց Միութիւնը եւ Հայ Ուս. Զահարմահալ Միութեան Նոր Զուղայի Մասնաճիւղը, իսկ «Արարատ» Միութեան Երէցների Միաւորը, ինչպէս միշտ, ամբողջ օրը ապահովեց այցելուների ժամանցը՝ մատուցելով Միաւորի անդամ-ուհիների միջոցով պատրաստւած ըմպելիքներ, աւանդական ճաշեր ու այլ ուտեստներ, ինչպէս նաեւ կազմակերպել էր խաղեր: Այս կարգի իրականացուող ամենամեայ վաճառքն առիթ է ընձեռում նաեւ համայնքի անդամներին՝ ունենալու յատկապէս Նոր Տարւայ թեմաներով ձեռարուեստի եւ ոչ-ձեռարուեստի վաճառք:

Արժէ նշել, որ նման տօնավաճառքների ընթացքում միութիւնները, ուտեստների պատրաստմանն ու վաճառքին մասնակցում են իրենց վարչական կազմով ու ամբողջ անդամ-ուհիներով:

ՅՈՒԲԵՐԵԿՈՅ՝ ՆՒԻՐՒԱԾ ԻՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՐ՝ ԴԿՏ. ՊՐՖ. ԿԱՐՕ ԼՈՒԿԱՍԻՆ

«Ճանաչենք մեր հայ գիտնականներին, քանզի նրանք են մեր ճանաչման եւ ինքնահաստատման բանալին»։

Նախաձեռնութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորի եւ հովանաւորութեամբ Միութեան Կենտրոնական Վարչութեան, հինգշաբթի՝ դեկտեմբերի 19-ի երեկոյեան տեղի ունեցաւ յուշերեկոյ՝ նուիրուած «Իրանի արհեստական բանականութեան եւ ռոբոտիկի գիտութեան հայր» կոչմանն արժանացած դկտ. պրֆ. Կարօ Լուկասին: Երեկոյի առթիւ հարուիրուած էր բանախօսելու՝ հայ ժողովրդի բարեկամ՝ Թեհրանի Աստղագիտութեան Կենտրոնի բարձրաստիճան խորհրդական եւ գիտական կազմի անդամ դկտ. Սէյէդ Հոջաթոլհաղ Հոսէյնին եւ պրֆ. Լուկասի այրին՝ Թեհրանի Համալսարանի հասարակագիտութեան ֆակուլտետի վարիչ եւ դասախօս դկտ. Էմիլիա Ներսիսեանը:

Ողջոյնի եւ բարիգալստեան խօսքում հաղորդավարուհի Կարին Տէր Մարտիրոսեանն ասաց. «*Հնարաւոր չէ նման մի յուշերեկոյի սահմաններում ճանաչել դկտ. պրֆ. Կարօ Լուկասին. միայն պիտի փորձել մասամբ մօտենալ այն մեծ անհատականութեանը եւ այն մեծ վաստակին, որ նա թողեց մարդկութեանը, որի միջոցով պիտի ճանաչենք ինքներս մեզ, քանզի նա որպէս մարդ եւ որպէս իրանահայ՝ մի մասնիկն է մեր էութեան ու մեծ հպարտութեամբ պիտի բարձրաձայնենք, որ նա ծնունդն է Նոր Ջուղայի*»:

Բացման խօսքից յետոյ, դկտ. Հոսէյնին գնահատանքի խօսք ուղղեց երեկոյի կազմակերպիչներին, որ նման միջոցառումներով մեծարում եւ ծանօթացնում են իրանահայ գիտնականներին: Նա նաեւ իր սէրն ու յագանքը յայտնելով հայերի հանդէպ, մեծ պարծանք համարեց իր աշակերտելը Լուկասին, ապա անդրադարձաւ դկտ. Ներսիսեանի ու նրա ծնողների հակիրճ կենսագրականին եւ թուարկեց գիտութեան ասպարէզում նրա ծաւալած գործնէութիւնը, ապա կենտրոնացաւ պրֆ. Լուկասի կենսագրականին եւ գիտական ոլորտում Իրանին մատուցած նրա բարձր ու անգնահատելի ծառայութիւնների մասին, որի համար ոչ միայն ճանաչել է որպէս «Իրանի արհեստական բանականութեան եւ ռոբոտիկ գիտութեան հայր», այլ նաեւ՝ «Ուսումնասիրութեան մարգարէ»:

Բանախօսի ասութեամբ՝ Իրանում «1000 յօդուած» տիտղոսով գիտնականները 4-ն են՝ Սէյէդ Մոհամմադ Մոհիթ Թաբաթաբայի, Փառուիզ Շահրիարի, Իռաջ Աֆշառ եւ Կարօ Լուկասը. վերջինս 1191 գիտական յօդուածի հեղինակ է: Նա զարմանքով նշեց, որ 60-ամեայ գիտնականի համար սա հսկայական աշխատանք է, որից մեծամասնութիւնը պատկանում է նրա կեանքի վերջին տարիներին: Թուարկեց նաեւ նրա ծաւալած այլ աշխատանքները եւ աւելացրեց. «*Նա լաւածանօթ լինելով հայոց պատմութեանն ու մշակոյթին, հայաճանաչութեան մի նոր դուռ բացեց իմ առջեւ. այն է՝ «Անւանի հայեր» գիրքը գրելու մտայղացումը, որ մօտ ապագայում պիտի լոյս տեսնի*»: Նա պրֆ. Լուկասին գնահատեց, որպէս մարդկային բարձր արժանիքներով օժտուած անձ, իսկ հայ մշակոյթը բնութագրեց այսպէս. «*Հայ մշակոյթը, փայփլող մարգարիտներով լեցուն՝ ալիքաւոր ովկիանոս է, որին պիտի ճանաչել*»:

Բանախօսը Լուկասի ընտանեկան լուսանկարների ցուցադրումով եւ լուսանկարների հետաքրքիր մեկնաբանութեամբ յետադարձ հայեացք նետեց նրա ընտանեկան ջերմ կեանքին ու աւարտեց Կարօ Լուկասի շիրմաքարի լուսանկարի բացատրականով, եւ զարմանքով ու գնահատանքով խօսեց քարից կերտուած շիրմաքարերի մասին՝ ասելով. «*Քարը հայի ձեռքում նման է մոմի*»: Նա ակնարկելով Ադրբէյջանի պետութեան կողմից հին Ջուղայի գերեզմանոցի խաչքարերի ոչնչացանմը՝ նշեց, որ մի տեսանիւթում տեսել է, թէ ինչպէս են մի հայկական գերեզմանոց ոչնչացնում եւ որ ինքը մեծ ցաւ է ապրել ու սրտի խորքում արտասուել է, եւ ասաց. «*Եթէ գեղեցիկը ճանաչելու եւ գնահատելու մի փոքր զգացողութիւն ունենային՝ նման տգէտ արարք չէին կատարի*»: Վերջում ներկաներին հրաւիրեց մէկ րոպէ լռութեամբ յարգել Կարօ Լուկասի վառ յիշատակը, որից յետոյ ցուցադրուեց դկտ. Հոսէյնիի հետ ունեցած հարցազրոյցը, որ նոյն օրը կատարել էր Ուսանողական Միաւորի Վարչութեան նախագահ՝ Նարբէյ Զարդն Դաւուդը:

Դասախօսը հարցազրուցում ասել էր, որ հայութեան մասին առաջին անգամը լսել է իր մայրիկից, իսկ հայ մշակոյթի ու պատմութեան հետ հիմնական իր ծանօթութիւնը կապեց համալսարանական շրջանում նոր-ջուղայեցիներ՝ Իրանում «Աստղագիտութեան մայր» կոչմանն արժանացած դկտ. Ալենուշ Տէրեանին եւ Իրանի «Արհեստական բանականութեան ու ռոբոտիկի գիտութեան հայր» դկտ. Կարօ Լուկասին: Նա նաեւ խօսել էր հայութեան վերաբերեալ իր ապագայ ծրագրերի մասին, որոնք են՝ մօտ ապագայում լոյս տեսնող Կարօ Լուկասի կեանքն ու գործնէութիւնը եւ հանրագիտարանի մակարդակով «Անուանի հայեր» խորագրով գրքերը, որոնցով նպատակ ունի արտացոլել Իրանի գիտութեան, մշակոյթի եւ քաղաքակրթութեան զարգացման ու վերելքի ուղութեամբ իրանահայութեան մեծ դերակատարութեանը: «*Ես բախտ եմ ունեցել չփւել հայ առաջնակարգ գիտնականների հետ եւ իմ ճանաչումը հայ հայրենակիցներից՝ նորարարութիւնն է, հաստատակամութիւնը եւ խոր խմաստունութիւնը*», ասել էր նա հարցազրոյցի պահին:

Յաջորդիւ դասախօսութեամբ հանդէս եկաւ դկտ. Ներսիսեանը: Նա եւս իր հերթին շնորհակալական խօսք ուղղելով երեկոյի կազմակերպիչներին, նախ բացայայտեց Լուկասի բնաւորութեան վառ գծերը, ապա մասնագիտական դասախօսութիւն կարդաց՝ ուսումնառութեան գործելաոճի մասին եւ ասաց. «*Հնարաւոր չէ նոյն սիստեմը կիրառել բոլոր ուսանողութեան համար. պիտի ճանաչել ուսանողի կարողութիւնները, նպատակներն ու սպասելիքները, սրանք այն կէտերն են որ Լուկասը կարեւորում էր եւ գուցէ նրանով էր, որ վայելում էր ուսանողների սէրն ու յարգանքը*»: Նա նաեւ անդրադարձաւ հասարակական յարաբերութիւնների կարեւոր կէտերին ու բնութագրեց մարդկային բանականութիւնն ու նրա դրսեւորման բազմաթիւ ձեւերը:

Վերջում տեղի ունեցաւ յուշանուէրների յանձնում եւ համեստ հիւրասիրութիւն: Երեկոյին ներկայ էին ազգային իշխանութեան եւ մարմինների, շրջանիս Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչները, հայ եւ պարսիկ դասախօսներ, ուսանողներ, միութենականներ եւ դկտ. Լուկասի յիշատակը յարգող այլ ներկաներ:

Նշելի է, որ սա դկտ. Հոսէյնիի 3-րդ դասախօսութիւնն էր, որ ունեցել է Միութեան Ուսանողական Միաւորի նախաձեռնութեամբ՝ առաջինը դկտ. Ալենուշ Տէրեանին նուիրուած մեծարանքի մի երեկոյի, երկրորդը «Անուանի իրանահայեր» թեմայով դասախօսական երեկոյի, եւ երրորդը՝ վերը նշուած ձեռնարկի կապակցութեամբ:

ՀԱՅ ԵՐԳԻ ԵՒ ԱՍՄՈՒՆՔԻ ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵԿՈՅ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շորեքշաբթի՝ 2013 թւականի դեկտեմբերի 4-ի երեկոյեան ժամը 8-ին, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» Դպրոցի սրահը մարդաշատ էր: Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահրի Մասնաճիւղի Մշակութային Միաւորն իր երկամեայ գործունէութեան աւարտին կազմակերպել էր ասմունքի եւ երգի երեկոյ, որին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների, ազգային մարմինների, Ն.Զ. Հայ Դատի Յանձնախմբի, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան, Նոր Ջուղայի եւ Շահինշահրի միութիւնների, «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեան ներկայացուցիչները եւ մեծ թւով արուեստասէր ժողովուրդ:

Ծրագրի բացումը կատարեց Մշակութային Միաւորի Վարչութեան անդամ տկն. Վիոլեթ Յարութիւնեանը, ով Միաւորի երկամեայ գործունէութեան զեկոյցը ներկայացրեց հանդիսատեսին, որից յետոյ բեմը տրամադրեց գեղարուեստական խմբին:

Նախ օրհնյ հաղորդավար Թովմա Գալստանեանը ողջունելով բոլորին՝ մարդկային կեանքի պատմութեան ընթացքում արուեստի դերակատարութեանն ու կարեւորութեանն անդրադառնալով՝ այն համարեց մարդու ստեղծագործական կարողութեան համար անհրաժեշտ պահանջ, որն իր մէջ մարմնաւորում է գեղեցկութիւնը եւ անբաժան է մարդուց: Նա իր խօսքի ընթացքում ասաց. «*Արուեստի բոլոր տեսակները ծառայում են արուեստներից մեծագոյնին՝ երկրի վրայ ապրելու արուեստին, որը մարդավայել եւ աստուածընկալ դարձնելու համար՝ պէտք է քաղաքակրթութիւն: Վերջինս բաղկացած է հոգեւոր եւ նիւթական անբաժանելի մասերից: Այն կառուցուած է մարդկութեան տքնաջան աշխատանքի նիւթական եւ հոգեւոր հիմքի վրայ՝ ամբողջ պատմութեան ընթացքում: Իսկ քաղաքակրթութեան ոգին մշակոյթն է, առանց որի չէր լինի ոչ մի գլուխգործոց, վեր չէին խոյանայ եգիպտական բուրգերը, չէին կառուցւի չինական մեծ պատը, Հայոց Զւարթնոցն ու աշխարհի հին ու «նոր» հրաշալիքները*»: Հաղորդավարը շեշտելով, որ հայ մշակոյթի ճիւղերից գեղեցկագոյնն է հայ երգը, երաժշտութիւնն ու ասմունքը, շարունակեց. «Երաժշտութիւնը բացառիկ երեւոյթ է՝ մշակոյթի ամենանուրբ, միեւնոյն ժամանակ՝ ամենաազդեցիկ ոլորտներից մէկը: Մարդն այն կարող է օգտագործել որպէս հզօր զէնք՝ կատարելագործելու եւ ստեղծագործելու համար, նաեւ՝ կործանելու եւ ոչնչացնելու նպատակով, որովհետեւ երաժշտութիւնը որոշակի էներգիայի, զգացմունքների եւ մտքերի կրող է»:

Գեղարուեստական ղեկավարների՝ մեներգների պատասխանատու Մեղեդի Քալաթար-Օհանեանի եւ ասմունքի բաժնի պատասխանատու Նոր Ջուղայի Հայ Մարզա-Մշակութային «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Կռունկ» Ասմունքի խմբի աւագ անդամուհի Լեռնիկ Ծատուրեան-Ղազարեանի միջոցով պատրաստուած ասմունքի եւ երգ-երաժշտութեան երեկոն ընդգրկում էր «Սիրոյ գիշեր», «Կարուսել», «Բլբուլի հիդ», «Երբ խանդում ես ինձ», «Սիրուս կսպասեմ», «Էս ով ինձ անիծեց», «Վայ քարին, վայ սարին», «Իմ անուշ տաւիղ», «Երգիր ինձ համար» դասական եւ արդի ասմունքներն ու երգերը, որոնք հանդիսատեսին մատուցեցին՝ Լիդուշ Քամարզարեանի, Ալիս Մկրտչեանի, Այլին Քեշիշեանի, Արիս Քեշիշեանի եւ Արութին Հախնազարեանի միջոցով՝ արժանանալով

ներկաների բարձր գնահատանքին եւ ծափողջոյններին:

Նշենք, որ ամբողջ երգերի նւագների գործիքաւորումը, միաժամանակ նաեւ ծրագրի ընթացքում որակեալ ձայն ապահովողն էր համայնքի շնորհաշատ երիտասարդներից Մարտիկ Յովհաննիսեանը:

Ծրագրի աւարտին, փակման խօսքի ընթացքում, Առաջնորդ Սրբազան Հայրն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին՝ գնահատելով ծրագրի կազմակերպիչ եւ մասնակից անձանց: Թեմական առաջնորդը ողջունելի երեւոյթ համարեց համայնքում օրըստօրէ զարգացող մշակութային եւ միութենական կեանքը, եւ ուժ ու կորով մաղթեց բոլոր այն անձանց, ովքեր մեծապէս արժէքաւորելով հայ մշակոյթի դերն ու կարեւորութիւնը՝ սփիւռքեան պայմաններում մաքուր եւ արժանի հայկական կեանք պահպանելու եւ զարգացնելու նպատակով, չեն խնայում իրենց տաղանդն ու թանկագին ժամանակը:

Ձեռնարկից յետոյ, Մշակութային Միաւորի միջոցով հիւրընկալուեցին հոգեւոր հայրերը, Նոր Ջուղայի ու Շահինշարի ազգային մարմինների եւ միութիւնների հրաւիրեալ ներկայացուցիչներն ու ծրագրի մասնակիցները: Մտերիմ մթնոլորտում Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեան անունից սրտի խօսք ասաց պրն. Վարուժ Մինասեանը, գնահատելով Մշակութային Միաւորին ու ծրագիրն իրականացնող անձնակազմին, եւ անդրադառնալով Շահինշահրի միութենական կեանքն առաւել եւս զարգացնելու նպատակով կառուցուող հաւաքատեղիի շինարարական աշխատանքին, վստահութիւն յայտնեց, որ Շահինշահրում կայ այն ուժականութիւնը, որով նոր փուլ է բացւելու համայնքի մարզա-մշակութային կեանքի զարգացման ընթացքում: Պրն. Մինասեանը շեշտեց, որ «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութիւնը, ինչպէս միշտ, այժմ եւս պատրաստ է լսելու եւ վերահասու լինելու Միութեան Շահինշահրի Մասնաճիւղի խնդիրներին:

Առաջնորդ Սրբազան Հայրը եւս կրկին անգամ իր գնահատանքի խօսքն ուղղեց ծրագրի կապակցութեամբ աշխատած անձանց եւ Մշակութային Միաւորին՝ երկամեայ գործունէութեան ժամանակաշրջանի լրման առթիւ, եւ յորդորեց անդամներին, որ նոյն եռանդով իրենց մասնակցութիւնն ու համագործակցութիւնը բերեն ապագայ կազմերի աշխատանքների ընթացքում:

Նշենք, որ հիւրասիրութեան պահին Մշակութային Միաւորի աշխատանքների համար նիւթական խոշոր նւիրատուութիւններ կատարուեցին Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութեան, Սպահանի Հայոց Թեմի Թեմական եւ Կրօնական խորհուրդների նաեւ Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան կողմից:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սպահանի Հայոց Թեմի 58-րդ Պատգամաւորական Ժողովի Բ հերթական նիստը գումարուեց ուրբաթ, 2013 թւականի նոյեմբերի 29-ի առաւօտեան՝ նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ ներկայութեամբ շրջանների պատգամաւորների, հոգեւորականաց դասի ներկայացուցիչների, Թեմական ու Կրօնական խորհուրդների, Հաշուեքննիչ Մարմնի եւ Ժողովի կողմից հրաւիրեալ ազգայիններ:

Նիստի բացումը կատարուեց գերշ. Սրբազան Հօր աղօթքով, որից յետոյ անցնելով օրակարգին՝ ժողովականների կողմից հիմնականում քննարկուեցին եւ հաստատուեցին չորս խոշորագոյն շինարարական աշխատանքների նախագծերն ու դրանց իրագործման նախնական փուլի նախահաշիւները: Սոյն շինարարական աշխատանքներից երկուսը՝ Թոհիդ պողոտայի թեմապատկան կալուածի վրայ առեւտրական համալիրի եւ ս. Ամենափրկչեան Վանքի դիմացի կալուածի վրայ հինգ խանութների կառուցումը՝ շահագործման հանգրւանից յետոյ ծառայեցուելու են Սպահանի Հայոց Թեմին՝ որպէս եկամտաբեր նոր աղբիւրներ:

Շինարարական աշխատանքների շարանում հաստատուեցին նաեւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան նորոգութիւնների նախագիծը՝ հիմնականում սրահի եւ խոհանոցի նորոգութիւնները, եւ երիտասարդ ընտանիքների համար բնակելի համալիրի կառուցումը՝ շուրջ 30 բնակարաններով՝ ս. Ամենափրկչեան Վանքին կից թեմապատկան կալուածի վրայ: Յատկանշական է, որ նշուած նախագծերի փաթեթները Թեմական Խորհրդից ստանալուց յետոյ, մասնագիտական ուսումնասիրութեան էին ենթարկուել Պատգամաւորական Ժողովի Կալուածա-Տնտեսական Յանձնաժողովի կողմից:

Ժողովը զբաղուեց նաեւ ընթացիկ տարուայ բիւդջէի որոշ գլուխների վերանայմամբ:

ԴԻՒԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ն.Զ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԳՐԲԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԻՆ

Երեքշաբթի՝ 2013 թւականի նոյեմբերի 26-ի առաւօտեան, Շահինշահիր Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սաները, գլխաւորութեամբ Շահինշահիր հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի եւ ուղեկցութեամբ դպրոցի ուսուցչական կազմի ու Ծնողական Խորհրդի, այցելեցին Ն.Զ. Հայոց Ազգային «Կատարինեան» եւ «Քանանեան» դպրոցների կողմից կազմակերպուած գրքի ցուցահանդէս:

Երբ աշակերտները շարքերով մուտք գործեցին «Քանանեան» դպրոց, փոխտեսչուհի տկն. Ռիմա Սիմոնեանը դիմաւորեց եւ բարի գալուստ մաղթեց նրանց, ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի անդամներին, ապա բոլորին առաջնորդեց դպրոցի սրահ՝ ցուցահանդէսում ներկայացուած գրքերը դիտելու՝ շեշտելով ուշադրութեամբ լսել գրադարանավարուհու բացատրութիւնները:

Սկզբում աշակերտները մօտեցան մանկական գրքերի եւ մտային խաղերի սեղաններին. այնտեղ տկն. Օհանեանը բացատրութիւններ փոխանցեց գրքերի մասին: Միւս կրպակների մօտ աշակերտներին ընկերակցեց օրդ. Կարին Տէր Մարտիրոսեանը եւ ընդհանուր գծերով ներկայացրեց «Պայման» պարբերականը, այն օգտակար համարելով ուղեցոյց օղակի աշակերտութեան համար:

Գրքերի մասին գեղեցիկ տեղեկութիւններ փոխանցեց նաեւ «Քանանեան» դպրոցի առաջադէմ աշակերտուհիներից եւ համահայկական Հայոց Լեզուի եւ Գրականութեան ու Հայ Եկեղեցու Պատմութեան Օլիմպիադաների մրցանակակիր Շաղիկ Մատթէոսեանը:

Աշակերտները հերթաբար դիտեցին բոլոր գրքերը, տկն. Օհանեանը գեղեցիկ մտայղացումով մրցութիւն կազմակերպեց նրանց համար հայ բանաստեղծների մասին, որը մեծ խանդավառութիւն ստեղծեց: Ցուցահանդէսն այցելելուց յետոյ, դպրոցի շրջափակում, դպրոցի Ծնողական Խորհուրդը համեստ հիւրասիրութեամբ հիւրընկալեց աշակերտներին եւ ուղեկցող խմբին:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ՑՈՅԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ ԵՒ ՀԻՆԵՒՀՐՈՒՄ

Հինգշաբթի՝ 2013 թւականի դեկտեմբերի 5-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Շահինշահիր Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» Դպրոցի սրահում տեղի ունեցաւ Շահինշահիր Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան միջոցով կազմակերպւած ամանորեայ ցուցահանդէս-վաճառքի բացումը:

Միութեան անդամուհիներից բացի, ներկայ էին Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը եւ Շահինշահիր Հայ Համայնքի Վարչութեան կողմից որպէս ներկայացուցիչ՝ Վարչութեան գրասենեակի պատասխանատու պրն. Էդուին Բաբումեանը, որոնց ձեռամբ հատւեց սրահի մուտքին կապւած ժապաւէնը, հոգշ. Հայր Սուրբի միջոցով արտասանած «Տէրունական» եւ գործի յաջողութեան համար կարճ աղօթքներից յետոյ:

Սրահ մուտք գործելուց յետոյ, հոգշ. Հայր Սուրբը ողջոյնի եւ օրհնութեան խօսք փոխանցեց ներկաներին, Կանանց Միութեան ամենամեայ այս ձեռնարկը համարելով Շահինշահիրում սպասւող եւ արդէն իսկ աւանդութեան վերածւած սովորութիւն: Նա ուրախութիւն յատնելով ամանորի մթնոլորտ ստեղծած միջոցառման կանուխ կազմակերպման համար՝ ասաց. «Ես մաղթում եմ, որ այս քաղցր պայծառութիւնն եւ ուրախութիւնը, որ վայելում ենք Կանանց Միութեան շնորհիւ, 2014 տարւայ համար լինի գեղեցիկ մի սկիզբ՝ ջերմութեամբ, յարգանքով, ընտանեկան սրբութեամբ եւ սիրով հանդերձ»: Հոգշ. Հայր Սուրբը յուսալով, որ ձեռնարկը պսակւելու է կատարեալ յաջողութեամբ, նշեց, որ Կանանց Միութիւնը, բարերարութիւնն իր աշխատանքների համար սկզբունք որդեգրելով, իր ձեռնարկների հասոյթներից բաժին է հանում կարօտեալներին, սիրիահայութեանը եւ ուր որ անհրաժեշտ է: Նա ամանորեայ բարեմաղթանքներով կանխաւ շնորհաւորեց Նոր Տարին եւ յաջողութիւն մաղթեց Կանանց Միութեանը:

Շահինշահիր Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան նախագահուհի տկն. Անահիտ Օհանեանն եւս իր շնորհակալութեան խօսքերն ուղղեց հոգշ. Հայր Սուրբին՝ միշտ Միութեան աշխատանքները սատարելու եւ հովանաւորելու համար, նաեւ գնահատեց Միութեան անդամուհիներին՝ ովքեր իրենց թանկագին ժամանակն էին տրամադրել ցուցահանդէս-վաճառքի կազմակերպման եւ նախապատրաստական աշխատանքներն իրագործելու նպատակով, նշելով, որ սոյն ձեռնակի ամբողջ հասոյթը յատկացւելու է սիրիահայութեանն օժանդակելու նպատակին:

Բացման արարողութիւնից յետոյ, ներկաները դիտեցին ցուցահանդէս-վաճառքի համար դասաւորւած իրերը, եւ Կանանց Միութեան անդամուհիներն անցան աշխատանքի, ինչպէս հոգշ. Հայր Սուրբն իր խօսքերի մէջ արտայայտւեց՝ 2014 թւականի ամանորեայ ուրախութիւնների եւ ձեռնարկների շարանի բացումը կատարելով:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Շորեքշաբթի՝ 2013 թւականի դեկտեմբեր 25-ի առաւօտեան Շահինշահիի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցում տեղի ունեցաւ Ամանորեայ տօնախմբութիւն, որին ներկայ էին Շահինշահիի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչ պրն. Արմոնդ Հախնազարեանը, դպրոցի տեսուչ պրն. Ղոջաւանդը, ուսուցչական կազմը, Ծնողական Խորհուրդը եւ սաների ծնողները:

Ուսուցչուհի տկն. Քարմէն Մատթէոսեանը ծրագրի բացումը կատարելով՝ շնորհաւորելց գալիք Ամանորը եւ Սուրբ Ծնունդը, բարի գալուստ մաղթելով ներկաներին: Տկն. Մատթէոսեանը գեղեցկօրէն խօսեց Նոր Տարւայ մասին, ասելով. «***Նոր Տարին մեծերի եւ փոքրերի համար ամենասիրուած եւ ամենասպասուած տօներից մէկն է։ Նոր յոյսերին, ակնկալիքներին եւ ցանկութիւններին՝ կատարում եւ երազանքներին իրականացում է պարգեւում***»: Նա իր խօսքի շարունակութեան մէջ անդրադարձաւ հայկական աւանդական եւ հին ամանորերի մասին՝ համապարփակ բացատրութիւն տալով նրանց վերաբերեալ: Ապա վերջում բոլորին հրաւիրեց ունկնդրելու սաների կողմից պատրաստուած Ամանորեայ երգերն ու ասմունքները:

«Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների աշակերտ-ուհիները կատարեցին գեղեցիկ Ամանօրեայ երգեր եւ դասարան առ դասարան արտասանեցին բանաստեղծութիւններ՝ օրւայ առիթով, որոնց հետ նւագակցում էր տկն. Աննա Դանիէլը: Ծրագրի ընթացքում Արիւն Մինասքանեանը «Զանգակներ» երգի երաժշտութիւնը կատարեց ջութակով: Գեղարւեստական բաժնի աւարտին սաների կանչերով մուտք գործեց Ձմեռ-Պապին, որն եւս ամանորեայ մի երգ նւիրեց սաներին եւ ծնողներին: Գեղարւեստական բաժնի աւարտին վեցերորդ դասարանի սաներ Վաչէ Քէշիշեանն ու Ռիմեթա Նազարեանը շնորհակալութիւն յայտնեցին բոլորին իրենց ներկայութեան համար:

Սաների կատարումների աւարտին դպրոցի տեսուչ պրն. Ղոջավանդն եւս իր հերթին շնորհաւորեց Ամանորը սրահում գտնւող բոլոր անձանց եւ յատկապէս աշակերտ-ուհիներին, գնահատեց նրանց իրենց գեղեցիկ կատարումների համար, ցանկանալով որ 2014 թւականը լինի աշխարհի բոլոր մարդկանց համար խաղաղութեան եւ առողջութեան տարի: Նա սաներին մաղթեց ընտանեկան ջերմ եւ առողջ մթնոլորտ, որն իրենց համար կը բերի առաջադիմութիւն եւ յաջողութիւն:

Շահինշահիի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը ծրագրի վերջում իր բարեմաղթանքները փոխանցեց ներկաներին Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօների առիթով: Նա ողջունեց սաների ձեռնարկը եւ նրանց ուսուցիչների տարած աշխատանքը՝ տօնական գեղեցիկ մթնոլորտ ստեղծելու համար: Հոգշ. Հայր Սուրբը մաղթեց, որ բոլորը ունենան իսկական հայ քրիստոնեայի նկարագիր:

Ծրագրի աւարտին սաները նկարահանւեցին Ձմեռ-Պապիի հետ եւ ստացան իրենց մրգերը, որոնք պատրաստել էր դպրոցի Ծնողական Խորհուրդը: Ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն բոլորի համար:

«ՆԱՐՕՏ» ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՁԵՌՆԱՐԿ

Հինգշաբթի՝ 2013 թւականի դեկտեմբերի 26-ի երեկոյեան, Շահինշահիր Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մեծ խանդավառութեամբ տեղի ունեցաւ Շահինշահիր «Նարօտ» Մանկա-Պատանեկան երգչախմբի Ամանորին եւ Սուրբ Ծննդեան տօնին նուիրուած ձեռնարկը: Ծրագրին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի Թեմական Առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, արժն. Տ. Մեսրոպ Աւ. քհնյ. Գալստանեանը, Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների, ազգային մարմինների, Շահինշահիր Հայ Համայնքի Վարչութեան, Հայ Դատի Յանձնախմբի, միութիւնների անդամներ եւ ներկայացուցիչներ, ու Նոր Ջուղայից եւ Շահինշահիրից հրաւիրեալներ:

Ծրագրի բացումը կատարուեց երգչախմբի անդամ Արգին Ղարիբեանի միջոցով, ով իր խօսքը սկսեց Ամանորեայ գեղեցիկ բարեմաղթանքի մի բանաստեղծութեամբ: Նա երգչախմբի անունից շնորհաւորեց Ամանորի կապակցութեամբ եւ ցանկացաւ որ 2014 թւականը լինի համայն հայութեան համար արդար ցանկութիւնների իրականացման տարի եւ յատկապէս մանուկ-պատանիներին բերի գեղեցիկ երազանքներով եւ բարութեամբ լեցուն օրեր: Անմիջապէս յետոյ սկսուեց երգչախմբի հարուստ երգացանկի ներկայացումը: Հերթաբար Լինէթ Միրզախանեանը եւ Արգին Ղարիբեանը իւրաքանչիւր խմբերգի եւ մեներգի համար գեղեցիկ խօսքեր էին ընթերցում, իսկ երգչախումբը եւ մեներգիչները յաջողութեամբ կատարեցին համարները: Ներկաների խրախուսանքներն ու ծափողջոյնները վկայում էին, որ երգչախմբի ամիսներով շարունակ փորձերը տուել են իրենց արժանի արդիւնքը: Երգչախումբը, ղեկավարութեամբ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, մատուցեց շուրջ 18 Ամանորեայ ուրախ երգեր եւ մեներգեր՝ ներկաներին փոխադրելով հեքիաթային անհոգ աշխարհ: Վերջին երգի հետ, որն ինքը հաւաքածոյ էր մի քանի ուրախ ամանորեայ երգերի, սրահ մուտք գործեց Ձմեռ-Պապին եւ Ամանորեայ մթնոլորտը իր կատարելութեան հասցրեց:

Ձեռնարկի աւարտին Արգին Ղարիբեանը շնորհակալութիւն յայտնելով բոլոր այն անձանց, ովքեր զանազան ձեւորով աջակցել էին՝ ծրագրի իրականացման գործին, բեմ հրաւիրեց Թեմական Առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանին՝ իր հայրական օրհնանքն ու պատգամը փոխանցելու: Գերշ. Սրբազան Հայրը նախ գնահատեց Հոգշ. Հայր Սուրբի տարած աշխատանքը եւ երգչախմբի անդամների հետեւողականութիւնն ու մասնակցութիւնը, նաեւ Շահինշահիրի Հայ Համայնքի Վարչութեանը, որը միշտ զօրավիգ է հանդիսացել Հոգշ. Հայր Սուրբին եւ Երգչախմբին: Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքի մէջ ասաց. «*Արդէն 2013 թւականն իր վարջալոյսին է մօտենում, սակայն իւրաքանչիւր աւարտ ունի մի նոր սկիզբ եւ նոր ծնունդ. ահաւասիկ 2014 տարեայ սկզբում դիմաւորելու ենք Աստծու կողմից մեզ տրուած ամենամեծ նւէրն ու գանձը՝ մեր Փրկչի եւ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի ծնունդը՝ Բեթղեհէմեան Արեւը, որ պէտք է ջերմացնի մեր հոգիներն ու սրտերը եւ մենք որպէս ազգ եւ ժողովուրդ Նրանով պէտք է նորոգւենք եւ ամրապնդենք մեր հայկեան կամքն ու լուսաւորչեան հաւատը*»: Գերշ. Սրբազան Հայրը նաեւ մաղթեց, որ 2014 թւականը Սուրիոյ հայութեան համար բերի խաղաղութիւն եւ դժուարութիւնների փարատում:

Վերջում Երգչախմբի Ծնողական Խորհրդի եւ Շահինշահիր Հայ Համայնքի Վարչութեան կողմից նւէրներ յանձնուեցին հոգշ. Հայր Սուրբին՝ առ ի երախտագիտութիւն եւ գնահատանք: Պատրաստուել էին նաեւ Ամանորեայ մրգեր, որոնք յանձնուեցին Երգչախմբի անդամներին:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԲԺԻՇԿ ԴԿՏ. ԱՍՊԵՏ ԻՍԱՂՈՒԼԵԱՆԸ

Իրանահայ բժիշկ դկտ. Ասպետ Իսաղուլեանը, բժշկի օրւայ առթիւ, ազնւօրէն ու բարեխղճօրէն ծառայելու եւ գիտութեան մակարդակի բարձրացման ուղղութեամբ անխոնջ աշխատելու համար, երկրի բժշկական կանոնադիր համակարգի կողմից ճանաչւել է՝ որպէս իրանական 1392 թւականի օրինակելի բժիշկ եւ գնահատւել Սպահանի Պետական համալսարանի Բժշկական ֆակուլտետի նախաձեռնութեամբ կազմակերպւած հանդիսաւոր միջոցառման ընթացքում:

Երիտասարդ ու յաջողակ բժշկին ընթերցողին առաւել ծանօթացնելու նպատակով ստորեւ համառոտ ներկայացնում ենք նրա կենսագրական գծերն ու կատարած աշխատանքները:

Դկտ. Ասպետ Իսաղուլեանը ծնւել է 1969 թւականին՝ Նոր Ջուղայում: Տարրական ուսումն ստացել է շրջանի հայոց ազգային «Արմէն» դպրոցում, իսկ ուղեցոյց եւ միջնակարգ կրթական շրջանները անց է կացրել հայոց ազգային «Կատարինեան» դպրոցում՝ միշտ աչքի ընկնելով՝ որպէս գերազանց եւ ջանասէր աշակերտ:

1988 թւականին մասնակցելով համալսարանների մուտքի քննութեանը՝ ընդունւել է Սպահանի Պետական համալսարանի բժշկական ճիւղը եւ Ա կարգի գնահատականներով բժշկական ուսման ընդհանուր շրջանը աւարտել է 1995 թւականին:

Ուսումն աւարտելուց յետոյ, իր ծառայութիւնն է սկսել Փերիա գաւառի Ֆեռէյդունշահր գիւղաքաղաքի հիւանդանոցում եւ շրջակայ ոչ զարգացած գիւղերի առողջապահութեան կենտրոններում, որտեղ նոյնպէս աչքի է ընկնել շրջանի առողջապահութեան մակարդակի բարձրացման գործում: 2001 թւականին նա իր սեփական կլինիկան է հիմնադրել Նոր Ջուղայում, ուր զբաղւում է բազմաթիւ հիւանդների ֆիզիկական եւ հոգեկան խնդիրների բուժմամբ:

2012 թւականին բուժծառայութեան գերազանց մատուցման եւ ճիշտ ու տրամաբանական հիմքերի վրայ դեղորայքի նշանակման համար՝ պարգեւատրւել է գնահատագրով՝ Դեղորայքի նշանակման եւ տրամաբանական օգտագործման կոմիտէի քարտուղար դկտ. Սադեղեանի ստորագրութեամբ:

Բժիշկ Ասպետ Իսաղուլեանը բազմազբաղ լինելով հանդերձ իր աշխոյժ մասնակցութիւնն է ցուցաբերում նաեւ ազգային աշխատանքներին՝ իր մասնագիտութիւնն ու փորձառութիւնը ի սպաս դնելով միւսների բարօրութեան գործին: Նա 2001 թւականից մինչեւ 2008-ը անդամակցելով Սպահանի հայոց թեմի Բարեսիրական մարմնին՝ որպէս խորհրդատու բժիշկ, օգտակար է հանդիսացել կարիքաւոր հիւանդների բուժման հարցում: Մինչեւ 2011 թւականը, տաս տարիներ շարունակ լինելով Հայոց ազգային ծերանոցի պատասխանատու բժիշկ՝ հետամուտ է եղել տարեց բնակիչների առողջական վիճակին եւ հոգածութիւն է ցուցաբերել նրանց հոգեկան ու ֆիզիկական առողջութեան կապակցութեամբ, իսկ 2010 թւականից մինչեւ օրս անդամակցելով Թեմի Հոգեւոր Ատեանին՝ աշխատանք է ծաւալում ընտանեկան անհամաձայնութիւնների լուծման ուղղութեամբ:

Շնորհաւորելով դկտ. Ասպետ Իսաղուլեանին՝ մաղթում ենք նրան նորանոր յաջողութիւններ:

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Զ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն

ՎՐԻՊՈՒՄ ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻՑ

Ս. Գէորգ Զօրավարի տօնի առթիւ նուիրատուութիւններ՝ մատաղացու գառ եւ գառի գնման փոխարէն

- Մէկ գառ. Անթօ եւ Կարինէ Ալեքսիֆարդներ:
- 4,450,000-ական ռիալ. Անդրէ Զարգարեան, Վարդուշ Յովսէփեան-Զարգարեան:
- 4,380,000 ռիալ. Էդուին Բահրամեան:
- 4,320,000 ռիալ. Նարեկ Թորոսեան:
- 4,000,000 ռիալ. Թումանեան ընտանիք:
- 3,840,000 ռիալ. Հերմինէ Ղարիբեան:
- 1,000,000-ական ռիալ. Անիթտա եւ Առնօ Բարսեղեաններ, Էլինա Ղարիբեան, ոմն:
- 500,000-ական ռիալ. Վանուհի Ղազարեան, Մասիս Ղազարեան:
- 100,000 ռիալ. Երեւանդ Շահնազարեան:

Ս. Գէորգ եկեղեցի

- 1,000,000 ռիալ. Ղասեմի:
- 500,000-ական ռիալ. Սադեղի, Արփի Հայրապետեան, Գայանէ Գէորգեան:
- 300,000 ռիալ. ոմն:
- 200,000 ռիալ. Էդնա եւ Էլենա Բաբումեաններ, Սոֆիա Մարկոսեան՝ ս. Աստուածածնի տօնի առթիւ:
- 150,000 ռիալ. Շաղայեղ Ալիփուր:
- 100,000 ռիալ. Անի Սարգիսեան, ոմն:

Ս. Յովհաննու եկեղեցի

- 1,500,000 ռիալ. Զանէս Գրիգորեան իր հանգուցեալ ծնողների յիշատակին:

Ս. Աստուածածին եկեղեցի

- 100,000 ռիալ. Ծաղկուշ Յովսէփեան:

Զանազան

- Երեք հատ սեղանի ծածկոց ս. Գէորգ եկեղեցուն Լալա Բաղդասարեանից:
- Մէկ պատի ժամացոյց ս. Նիկողայոս եկեղեցուն Սեւան եւ Ռայմոնդ Մինաս Խաչիկեաններից:
- Մէկ սեղանի ծածկոց ս. Նիկողայոս եկեղեցուն Քարլոս Խուդաբախշեանից իր հանգուցեալ մեծհօր՝ Յովհաննէս Խուդաբախշեանի յիշատակին:

Հանգուցեալ Կատարինէ Բաղումեանի յիշատակին

- 3,000,000 ռիալ. Ասպետ Իսաղուլեան:
- 500,000 ռիալ. Մեսրոպ Իսաղուլեան:
- 200,000-ական ռիալ. Արսեն Շահբազեան, Երուանդ Պողոսեան, Հրաչ Շիրանեան, Արմէն Շահբազեան, Սեւակ Բաղրամեան, Զանսոն Աղաբաբայեան:
- 150,000-ական ռիալ. Արտուշ եւ Մարգարիտ Սիրջանեաններ, Սամսոն եւ Արեւահատ Զարգարեաններ, Սօնիկ Զոհրաբեան, Ադրինէ Խաչատրեան, Ռաֆֆի Ալեքսանդրեան:
- 100,000-ական ռիալ. Մասիս Դիլանչեան, Աննիկ Քեշիշեան, Մաքրուհի Մարկոսեան, Զանիկ Ղազարեան, Գուրգեն Թահմազեան, Գարեգին Մարկոսեան, Մարօ Բաղումեան, Սաթի եւ Սօնա Զարգարեաններ, Ռոբերտ եւ Յասմիկ Հազարմալեաններ:
- 70,000 ռիալ. Ղազար եւ Արաքս Թահմազեաններ:

Հանգուցեալ Սաթինա Մանսուրեանի յիշատակին

- 100,000-ական ռիալ. Փառանձեմ Մինասեան, Սեւակ եւ Արմինէ Խաչատրեաններ:

Հանգուցեալ Սարգիս Սամէլեանի յիշատակին

- 500,000 ռիալ. Դիանա Ղազարեան:
- 400,000 ռիալ. Համիկ եւ Արսինէ Ալեքսանդրեաններ:
- 150,000 ռիալ. Արեւիկ Ալլահուերդեան:
- 100,000 ռիալ. Սիլուարդ Թորոսեան:

Հանգուցեալ Թամար Ղարախանեանի յիշատակին

- 70,000 ռիալ. Անուշ Ղարախանեան:

Հանգուցեալ Ծաղկուշ Մկրտչեանի յիշատակին

- 1,000,000 ռիալ. Ռազմիկ Մկրտչեան:
- 300,000-ական ռիալ. Տիգրան եւ Ռիմա Մկրտչեաններ, Հռիփսիկ Ռոստոմեան:
- 200,000-ական ռիալ. Առիւծ Խաչատրեան, Արմոնդ եւ Սօնիա Փանոսեաններ, Հիմենզ Դաւթեան:
- 150,000 ռիալ. Ռուբեն եւ Մարինէ Խուդավերդեաններ:
- 100,000-ական ռիալ. Նինա Խաչատրեան, Զաւեն եւ Մինուշ Մելիքեաններ, Լուսի Մարտոյեան, Մագի Խաչատրեան, Ասպետ եւ Լորետա Վարդանեաններ:
- 80,000 ռիալ. Անիտա Ալեքսանդրեան:
- 50,000-ական ռիալ. Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ, Պերճիկ Քամարզարեան:

Հանգուցեալ Նւարդ Դեհբաշեանի յիշատակին

- 150,000 ռիալ. Յովսէփ Յովսէփեան:
- 100,000-ական ռիալ. Զանիկ Ղազարեան, Յովհաննէս Խուդավերդեան, Սերոժ Սիմոնեան, Արշալոյս Խուդավերդեան:

Հանգուցեալ Վարուժ Յովհաննիսեանի յիշատակին

- 500,000 ռիալ. Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւն:
- 200,000 ռիալ. Վիգէն Մարգարեան:
- 150,000 ռիալ. Արսէն Շահբազեան:
- 50,000 ռիալ. Համազ Մարգարեան:

Հանգուցեալ Ազատուհի Վարդումեանի յիշատակին

- 200,000 ռիալ. Կարօ Յովսէփեան:
- 100,000-ական ռիալ. Ռազմիկ Գալստեան, Լուսիկ Յարութիւնեան:

Հանգուցեալ Թովմաս Ամիրխանեանի յիշատակին

- 500,000 ռիալ. Ն. Զ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Անժել Մարուքեան, Էդուին եւ Անգինէ Թադէոսեաններ:
- 300,000 ռիալ. Հանգուցեալի դստեր ընկերուհիներ:
- 200,000 ռիալ. Ս.Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբ, Նարբէյ Խաշաքեան, Փիլիկ Սիմոնեան:
- 150,000-ական ռիալ. Քլար Խաշաքեան, Զանի եւ Թելօ Պողոսեաններ, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ:
- 110,000 ռիալ. Հայկազ Ղազարեան:
- 100,000 ռիալ. Գէորգ եւ Քնարիկ Քեշիշեաններ, Սոնիկ Կիրակոսեան:
- 60,000 ռիալ. Եղսօ Շահբազեան:
- 50,000-ական ռիալ. Ռազմիկ Բաղրամեան, Լուսիկ Խուդավերդեան, Ովսաննա Ղարախանեան:

Հանգուցեալ Անդրանիկ Յովսէփեանի յիշատակին

- 1,000,000 ռիալ. Ն.Զ. Հայոց Ազգային «Արմէն» Կրթահամալիրի տեսչութիւն:
- 500,000 ռիալ. Վրէժ եւ Սիլուա Յովսէփեաններ, Աբդալ եւ

Էդուին Յովսէփեաններ, Կարօ Յովսէփեան:

- 200,000-ական ռիալ. Ամիրխան Ղազարեան, Գրիգոր Յովսէփեան, Գէորգ Յովսէփեան, Գրիշ եւ Վարդուհի Քալանթար Օհանեաններ, Նինա եւ Մինուշ Վարդանեաններ, Գէորգ Յովսէփեան:

- 170,000 ռիալ. Հայկազ Ղազարեան:

- 150,000 ռիալ. Սերոժ Աւանէսեան:

- 100,000-ական ռիալ. Մարջիկ Մինասեան, Գալստան Ղազարեան, Հայկուշ Խաչիկեան, Զանիկ Ղազարեան, Սուսանբար Ղազարեան, Աննա Քեշիշեան, Զանի եւ Թելօ Պօղոսեաններ, Արաքս տէր Մարտիրոսեան, Ալվարդ Փանոսեան, Մալուս Յովսէփեան, Խաչատուր Ղազարեան:

- 50,000 ռիալ. Խաչիկ Յովսէփեան, Սիրանուշ Յովսէփեան, Երուանդ Խաչիկեան:

Ն.Զ. Հայոց Գերեզմանատան Բարեկարգման Մարմին

- 1,000,000 ռիալ. Արթին Մուրադեան՝ Արշակ Մուրադեանի եւ Լուսիկ Զարգարեանի յիշատակին:

Ն.Զ. Հայ Կանայց Գթութեան Միութիւն

Հայոց Ազգային Մեռանոց

- 10,000,000 ռիալ. Արմէն եւ Խեչօ Խուդավերդեան՝ իրենց մօր՝ Աննիկ Խուդավերդեանի յիշատակին:

- 100 եւրօ. Աննա Մայիլեան:

- 100 դոլար Ռուբէն Բաբայեան:

- 2,000,000 ռիալ. ոմն պարսիկ:

- 1,000,000 ռիալ. Ռիթա Գէորգեան՝ Արշիկ Քիւիշեան-Գէորգեանի յիշատակ եւ Արմինէ Խուդավերդեան՝ իր մօր՝ Աննիկ Խուդավերդեանի յիշատակին:

- 500,000 ռիալ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան եւ Էդմոնդ եւ Թանիա Անթանէսներ՝ իրենց մօր եւ մեծ մօր յիշատակին, Ծաղկուշ Քեշիշեան:

- 200,000 ռիալ. ոմն:

- 150,000 ռիալ. Արին Քեշիշեան:

- Զանազան նուիրատուութիւն եւ սննդամթերք. Լորիկ Զարդն՝ հոգեճաշ՝ Ռոզի Մարտիրոսեանի քառասունքի առթիւ, Սամսոն Զարգարեան, Վարդուշ Ղազարեան, Վիկուշ Գորգինեան, Ժանեթ Իւնիկեան, Սիրանոյշ Մայիլեան, Ալիս Ասատրեան, Լորեթա Գալստեան, Վերժիկ Թորոսեան, Ֆլոր Ալահվերդեան, Վարդգէս Յովհաննիսեան, Ծաղկուշ Քեշիշեան, Արաքս Շիրանեան, Արսէն Ղազարեան, Մանշիկ Խուդավերդեան, Պերճիկ Խուդավերդեան, Ծատուր Մանսուրեան, Սեւանա Ղազարեան, Վիկտորիա Մանսուրեան, Երան Միրզայեան, Արաքս Թահմազեան-Վարդգէս Յովսէփեան, Խուդաբախշեան ընտանիքի՝ հոգեճաշ՝ Աննիկ Խուդաբախշեանի յիշատակին, կոյս Սուր Ժոզեֆին, Խաթաբախշ, Ֆալլահիտուռ, Ֆառհադի, Փառիսա Ղութի, «Էմամ Ալի» Ուսանողական Օգնութեան Միութիւն, Մոհամմադի:

Բարեբարուհիների յիշատակին նուիրուած երաժշտական երեկոյի առթիւ

- 1,500,000 ռիալ. Ղարղուն Գիւղի ս. Նշան Եկեղեցու Վարչութիւն:

- 1,000,000 ռիալ. Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւն:

- 300,000-ական ռիալ. Հայ Ուս. Զհարմահալ Միութեան Ն.Զ. Մասնաճիւղ, Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, Փերիոյ Կրթասիրաց Միութեան Շահինշահրի Մասնաճիւղ, Ռուբէն Խաչիկ-Գրիգորի, Յակոբեան ընտանիք:

- 200,000-ական ռիալ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն, Խոյգան Գիւղի Եկեղեցեաց Վարչութիւն, Շահինշահրի «Նարեկ» Երգչախումբ, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Արբի Բաբումեան, Համիկ Ալեքսանդրեան, Մինաս Թահմազեան, Մառիկ Մինասեան:

- 150,000 ռիալ. Արիս Քեշիշեան:

- 100,000-ական ռիալ. Ն.Զ. Հայուհեաց Հոգեւոր Լսարան եւ «Շուշանիկ» Երգչախումբ, Մկրտիչ Աւետումեան:

Հայ Դատի Նոր Զուղայի Յանձնախումբ

Հանգուցեալ Վրէժ Տէր Յովհաննէսեանի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի

- 2,500,000 ռիալ. Արամայիս Թահմազեան:

- 2,000,000 ռիալ. Ռուբիկ Տէր Յովհաննէսեան:

- 1,000,000 ռիալ. Հրանտ Տէր Յովհաննէսեան:

- 500,000-ական ռիալ. Ն.Զ. Հայոց Եկեղեցեաց Վարչութիւն, Արարատ Տէր Յովհաննէսեան:

Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութիւն

- 1,500,000 ռիալ. Շահինշահր Հայ Համայնքի Վարչութիւն:

- 500,000 ռիալ. Տիգրանուհի Ղեւեան:

- 200,000 ռիալ. Երէցկին Ծաղկուշ Գալստանեան:

- 150,000-ական ռիալ. Ռազմիկ Գալստանեան, Վարդուշ Հախնազարեան, Պերճուհի Նազարեան, Լիդուշ Քոնարքի:

- 100,000-ական ռիալ. Հիլմա Աղախանեան, Քարմէն Յարութիւնեան, Սառա Գրիգորեան, Շահէն Բաբումեան, Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ, Ալիս Մանուկեան, Ծաղկուշ Մանսուրեան, Զարդիկ Սուքիասեան, Նարմիկ Դեհբաշեան, Իսկուհի Դեհբաշեան:

- 50,000-ական ռիալ. Շողիկ Քեշիշեան, Յասմիկ Փանոսեան, Քարմէն Շահիջանեան:

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Այլին Քեշիշեանը։

Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրում է պրն. Գեւիկ Խաչատրեանը։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

خلیفه گری ارامنه جلفای اصفهان
و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com

Tel: +98–311–6243471-2
Fax: +98–311–6270999